# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

## ԱՐԴՅՈ՞Ք ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ Է «ՊԱՏՃԱՌ ՍԱՀՄԱՆԱՑ ԳՐՈՑՆ»-Ը

*(տպագրվում է հեղինակի ծննդյան 60-ամյակի առթիվ)*

Հայ մատենագրության հարուստ անդաստանում կան բազմաթիվ հուշարձաններ, որոնք մեզ են հասել անստորագիր, ուստի գիտական շրջանակներում հայտնի են որպես «անանուն» ստեղծագործություններ: Այդօրինակ երկերից են «Պատճառ Սահմանաց գրոցն» և «Լուծմունք Սահմանաց գրոց Դաւթի Անհաղթ փիլիսոփայի» խիստ արժեքավոր փիլիսոփայական աշխատությունները (այսուհետև՝ «Պատճառ» և «Լուծմունք»):

Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակի առթիվ Ա.Մաղոյանի հեղինակակցությամբ հրատարակության պատրաստելով «Լուծմունքի» Ա խմբագրության (մեզ է հասել երկու տարբերակով) քննական բնագիրը[1], նկատել էինք, որ բովանդակային և լեզվական տեսակետից ուղղակի կապ կա այդ երկու աշխատությունների՝ «Պատճառ»-ի և «Լուծմունք»-ի միջև: Ցավոք, ժամանակի սղության պատճառով հնարավորություն չունեցանք ստուգապես որոշելու այդ կապի բնույթը, ուստի բավարարվեցինք գրելով հետևյալը. «Մի շարք ձեռագրերում անանուն «Լուծմունքին» նախորդում է մի բնագիր, որ սովորաբար ունի «Պատճառք* Սահմանաց գրոց» վերնագիրը: Այստեղ մանրամասնորեն պարզաբանվում են «Սահմանքի» գրության պայմանները: Ուշագրավ է, որ թիվ 437 ձեռագրում «Պատճառքը» և «Լուծմունքը» ձուլված են, և վերջինս դարձել է մյուսի բնական շարունակությունը, ուստի և «Լուծմունքը» դուրս է մնացել ուշադրությունից: Ձեռագրում (թղ. 145 բ) կարդում ենք. «Որ վասն սմին խնջ երկամբք բազում տեւալ զանձն իւր տաժանմանն, գիրս ընդ դէմ սոցա որպէս և հնոցն, և կամ ի մի տեղ ղնելով զնոսա ի տեղի անմնաց, և ղնէ բան ըմբերանիչ ոչ կարծեցելոց բարի ոք յաղագս իմաստասիրութեանն: Եւ բանիւք ցուցանէ սա գեղեցիկ զոլ զնա և ցանկալի, քան զոր ոչ պատուականագոյն յերևելեացս: Եւ զայս հնարս իմացեալ իմաստնոյս ազգասիրութեամբ եկեալ յայտնեալ: Իբրու զի յորժամ տեսցեն զսահման և զկրթութիւն իմաստասիրութեանն ի սէր շարժին նմին և բաղձան ուսանել որ և այսպէս սկսանի ասելով», - այնուհետև սկսվում է մեկնությունը՝ «Որ միանգամ...»:

Սա մտածել է տալիս, թե անհնարին չէ, որ «Պատճառքը» և «Լուծմունքը» մեկ միասնական աշխատություն են: Չէ՞ որ դեռևս Դավիթ Անհաղթն էր ասում, թե նախքան բուն մեկնությունն անցնելը անհրաժեշտ է լուսաբանել հետևյալ ութ հարցերը. դիտաւորութիւն, պիտանացութիւն, պատճառք մակագրութեան, հարազատութիւն, բաժանումն գլխոցն, վարդապետական յեղանակն, առ ինչ մասն վերաբերումն: Դավթի այս պահանջը ղեկավար սկզբունք էր մեկնիչների համար: Բացի այդ, «Պատճառքը» և «Լուծմունքը» հոգեհարազատ են նաև բովանդակությամբ, լեզվով: Ինչևէ: Այս հարցը տվյալ պարագային երկրորդական է այն իմաստով, որ այսօր մեզ համար առավել արժեքավորը բուն «Լուծմունքն» է»[2]:

Անկեղծորեն ասած, բերված հատվածի վերջին նախադասությունն այսօր ինձ ոչ միայն չի գոհացնում, այլև առաջացնում է ափսոսանքի զգացում: Եվ ինչպես կարող եմ չափսոսալ, երբ քսան տարի անց զգում եմ, որ ընդհուպ մոտեցած ենք եղել բանասիրական կարևոր հայտնագործության, բայց, տոնակատարությունների բնորոշ հապճեպության ու շտապողականության հետևանքով, բարձրացված հարցին չենք տվել սպառիչ պատասխան: Այո՛, ճիշտ է ասված, որ երբեմն օրերի պակասը գիտության համար կարող է տասնամյակներ, գուցե և՛ դարեր արժենալ:

Այսօր արդեն, երբ հնարավորություն եմ ունեցել մանրազննորեն ուսումնասիրելու Մաշտոցի անվ. մատենադարանի և Երուսաղեմի ս.Յակոբեանց միաբանության ձեռագրատան ինձ հետաքրքրող շուրջ մեկուկես տասնյակ ձեռագրեր, կարող եմ վերջնական խոսք ասել մատենագրական հիշյալ երկու միավորների առնչության մասին:

Համաժայն մատենադարանի փիլիսոփայական նյութեր պարունակող ձեռագրերի ցուցակի,[3]

---

[1] Տե՛ս «Լուծմունք «Սահմանաց գրոց» Դաւթի Անհաղթ փիլիսոփայի», «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թիվ 1, էջ 123-158:

*Ճիշտ է՝ «Պատճառ» ձևը, ուստի այսուհետև մեր խոսքում գործածելու ենք այդ ձևը:

[2] Ա.Մաղոյան, Հր. Միրզոյան, Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թիվ 1, էջ 122:

[3] Տե՛ս "Философские труды в армянских рукописях Матенадарана /краткий библиографический указатель/", "Вестник Матенадарана", том. 3, 1956, էջ387-457: Ի դեպ՝ ձեռագրերի համարներն այստեղ տրված են ժամանակագրական սկզբունքով, իսկ մենք՝ ելնելով աեխնիկական նկատառումներից, առաջ ենք թվահամարների հերթականությամբ: Ձեռագրի էջերը և գրության ժամանակը չենք նշում, որովհետև նախ՝ ներկա դեպքում դրանք առանձնապես կարևոր չեն, երկրորդ, ցուցակում կան որոշ անճշտություններ, որանք չենք ցանկանում կրկնել, իսկ ստուգել, ցավոք, հնարավորություն չունենք:

«Պատճառը» և «Լուծմունքն» առկա են հետևյալ ձեռագրերում.

| Պատճառ | | Լուծմունք | |
|---|---|---|---|
| Ձեռ. N N | 437 | Ձեռ. N N | 621 |
| | 626 | | 627 |
| | 1480 | | 1480 |
| | 1764 | | 1845 |
| | 1809 | | 3139 |
| | 1931 | | 3201 |
| | 4268 | | 3449 |
| | 6906 | | 4132 |
| | | | 4932 |
| | | | 5073 |
| | | | 6481 |
| | | | 8763 |

Ինչպես տեսնում ենք, բերված ցանկերում կրկնվում է միայն մեկ ձեռագրահամար՝ 1480: Այսինքն՝ ցուցակը կազմողների կարծիքով, միայն վերջինս ունի թե «Պատճառը» և թե «Լուծմունքը»: Մինչդեռ պարզվում է, որ մյուս յոթ ձեռագրերից վեցը նույնպես ունեն «Լուծմունքի» Ա խմբագրության լրիվ տեքստը, իսկ յոթերորդը (թիվ 626) ունի միայն «Լուծմունքի» սկզբնահատվածը: Ընդհակառակը, իբրև միայն «Լուծմունք» պարունակող ձեռագրերից «Պատճառ» ունի նաև թիվ 4132 ձեռագիրը: Գրեթե նույնն է պատկերը նաև Երուսաղեմի ձեռագրերում, որոնցից երեքի համար նշվում է, որ ունեն միայն «Պատճառ» ( ձեռ. NN 172,318,434), իսկ երկուսի համար՝ «Լուծմունք» (NN 718, 885)[4]: Մեր ստուգումից պարզվեց, որ «Պատճառ» ունեցող բոլոր ձեռագրերն ամփոփում են նաև «Լուծմունքի» Ա խմբագրությունը, իսկ լուծմունքակիր ձեռագրերը չունեն խնդրո առարկա «Պատճառը», բայց պարունակում են այլ «Պատճառ», որը զետեղված է «Լուծմունքից» առաջ այնքանով, որքանով վերաբերում է Դավիթ Անհաղթի «Սահմանքին»:

Եթե փորձենք լի մի բերել վերն ասվածը, ապա կստացվի, որ երկու ձեռագրացուցակներում ներկայացված՝ որպես միայն «Պատճառ» ունեցող տասը ձեռագրերից ինը ունեն նաև «Լուծմունքի» Ա խմբագրության լրիվ տեքստը, իսկ տասներորդը՝ նրա սկզբնահատվածը: Քանի որ «Լուծմունք» ունեցող ձեռագրերից երկուսը պարունակում են նաև «Պատճառը», ընդհանուր թվով կունենանք «Պատճառն» ու «Լուծմունքը»[5] միասին պարունակող 12 ձեռագիր, որոնցից տասնմեկն ունի ամբողջ աշխատությունը, իսկ միայն մեկը՝ նրա մի մասը: Ասենք նաև, որ այդ տասներկու ձեռագրերից միայն երկուսում է, որ «Պատճառից» հետո գրված է՝ «Լուծմունք Սահմանաց գրոց» ենթավերնագիրը և ընդօրինակված «Լուծմունքի» տեքստը: Մնացած տասը ձեռագրում գրիչները դրանք որել են հիմնականում երկու մոտեցում: Մի դեպքում միասնական աշխատության երկու տարբերնույթ հատվածներն իրարից զատելու նպատակով «Լուծմունքի» առաջին տողը կամ տողերը, երբեմն միայն առաջին գլխատառը (Ո), գրել են այլ թանաքով (հիմնականում կարմիր) կամ դիմել համանման միջոցների: Մյուս դեպքում դրանք իրարից զատելու և ոչ մի փորձ չեն կատարել:

Ընթերցողի համբերությունը չչարաշահելու համար չենք ցանկանում մեկ առ մեկ ներկայացնել խնդրո առարկա ձեռագրերի սույն հատվածի պատկերը, ուստի ի հաստատումն ասվածի բերենք միայն մեկ-երկու օրինակ:

Առաջին խմբի համար, իմ կարծիքով, ամենից բնորոշը Մաշտոցի անվ. մատենադարանի թիվ 1764 ձեռագիրն է, որտեղ «Պատճառն» սկսվելով 325 բ էջի առաջին սյունակի վերջին տողի վերջից (կարմիր թանաքով կարճագրված է Պատճառ)՝ ավարտվում է 328ա էջի երկրորդ սյունակի 13-րդ տողում, որն ունի ընդամենը երկուսուկես բառ՝ «պէս* սկսանի ասելով»: Այնուհետև բնականոն շարունակվում է երկրորդ հատվածը, իհարկե, առանց վերնագրի, բայց առաջին տողը գրված է մանուշակագույն,

---

[4] Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», կազմեց Նորայր եպս. Պողարեան, տասնմեկ հատորով, հ.1-ին, 2-րդ, 3-րդ, Երուսաղէմ, 1966, 1967, 1968:

[5] Ի միջի այլոց, երբ Ա.Մադոյանի հետ ձեռնամուխ եղանք «Լուծմունքի» Ա խմբագրության քննական բնագրի կազմման աշխատանքներին, սկզբնապես մեզ հայտնի էին միայն երեք ձեռագիր, ուստի գրել էինք, որ «Ա խմբագրությունը անհամեմատ պակաս ընդօրինակություններ ունի»: Հետագայում պարզվեց, որ նույն խմբագրությանն է պատկանում նաև Մատենադարանի թիվ 4268 ձեռագիրը, ուստի հարկ համարեցինք վերջում ավելացնել հետևյալ ծանոթագրությունը. «Հրապարակումն արդեն տպագրվում էր, երբ պարզվեց, որ մատենադարանի թիվ 4268 ձեռագիրը ևս ունի «Լուծմունքի» Ա խմբագրությունը: Բացառված չէ և այլ ձեռագրերի գոյությունը» (Ա.Մադոյան, Հր. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 122):

*«Պէս» գրված է կարճագրությամբ. պ՝ վերևում կարճագրության նշան:

իսկ երկրորդ տողը՝ կարմիր թանաքով: Ընդ որում, «Լուծմունքի» առաջին գլխատառը՝ Ո, գրված է այնքան մեծ, որ զբաղեցնում է նախորդ և հաջորդ տողի սկզբնամասը: Սրան հար և նման է Մատենադարանի թիվ 1931 ձեռագիրը, որի 1ա էջի առաջին իսկ տողից սկսվում է «Պատճառը», բայց առանց վերնագրի: Դրա փոխարեն նույն էջի ներքևի լուսանցքում կարմիր թանաքով գրված է՝ «Մեծ լուծմունքն է»: Ինչպես տեսնում ենք, գրիչն այն ընկալել է որպես մեկ միասնական աշխատություն, որը կոչել է «Լուծմունք» և այն էլ՝ «մեծ», ի տարբերություն իրեն ծանոթ այլ լուծմունքների: Նորից՝ լուծմունքահատվածի առաջին գլխատառը՝ Ո, գրված է այնքան մեծ, որ վերևի մասն զբաղեցնում է նաև նախորդ տողի համապատասխան տարածքը՝ ասես միացնելով երկու հատվածները: Ամբողջ տողը գրված է կարմիր թանաքով:

Երկրորդ խմբի ձեռագրերից հատկապես ուշագրավ է Երուսաղեմի թիվ 318 ձեռագիրը, որտեղ պատճառն սկսվում է 778 էջի* երկրորդ սյունյակի հենց սկզբից և ավարտվում է 782 էջի երկրորդ սյունակի սկզբնամասում: Ընդ որում, տողի վերջում մի փոքրիկ տարածք մնացել է բաց, բայց գրիչն այն դատարկ չի թողել, այլ շարունակել է լուծմունքը՝ այդ տողում տեղավորելով ընդամենը երկու բառ՝ «Որք միանգամ», դույզն-իսկ չփորձելով երկու հատվածները զատել իրարից: Պարզապես «Որք» բառից առաջ դրված է հետևյալ նշանը՝ ՟, որը համարժեք է «Բան» բառին: Այսինքն՝ ցանկացել է ընթերցողին հասկացնել, որ բերվում է Անհաղթի միտքը: Այս տեսակետից արժեքավոր է նաև Մաշտոցի անվ. մատենադարանի թիվ 626 ձեռագիրը, որը, ինչպես արդեն ասվել է, միակն է, որ «Պատճառից» հետո ունի լուծմունքամասի միայն սկզբնահատվածը, բայց այնպես, որ բնավ չի զգացվում, թե որտեղ է ավարտվում առաջինը և որտեղ սկսվում երկրորդը: Բանն այն է, որ 140ա էջի 10-րդ տողում գրված է պատճառի վերջին բառի վերջին վանկը (լով:), այնուհետև շարունակված է լուծմունքի սկզբնահատվածը և այդ էջում էլ ավարտվում է: Թեև ձեռագրի վերջին էջը՝ 140բ, դատարկ է, բայց գրիչը չի շարունակել՝ հավանաբար մտածելով, որ, միևնույնն է, գրելիքն անհամեմատ ավելի շատ է, քան ունեցած ազատ մակերեսը:

Ուսումնասիրված ձեռագրերից մեկն առանձնանում է ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ այն ստացողի հիշատակարանով: Խոսքը վերաբերում է Երուսաղեմի թիվ 434 ձեռագրին, որը բաղկացած է միայն Անհաղթի գրչին պատկանող կամ նրան վերագրվող աշխատություններից ու դրանց լուծմունքներից: Այն ընդօրինակվել է 17-րդ դարում և պարունակում է Անհաղթի «Սահմանքը» (էջ 1-53), «Ամենայն չար տանջելի» Դավթին վերագրվող փոքրիկ աշխատությունը (էջ53, կես էջ), «Պատճառ Սահմանաց գրոցն» (էջ 54-77), վերջապես, Շնորհալուն վերագրվող «Տեառն Ներսիսի: Ամենայն չար տանջելի» (էջ 77-81) մեկնողական երկը: Վերջում կա ձեռագիրն ստացող Սուքիաս վարդապետի հետևյալ հիշատակարանը. «Ես նուաստ մեղօք լցեալ և ապիկար Սուքիաս լոկ անուն վարդապետ առձայնեալս, ետու զգիրս զայս լուծմանց Սահմանացն Դաւթի. յիշատակ յաւիտենական ի սրբոյ Երուսաղէմ ի դուռն սրբոյն Յակոբայ վանացն Հայոց: Որք նենգութեամբ հանեն անտի զկրէժխնդրութիւնն յԱստուծոյ ընկալցին: Եւ որք խնամարկենն սիրով առցեն զվարձս ըստ վաստակոց իւրոց ի Քրիստոսէ Աստուծոյ յուսոյն մերմէ: Ամէն» (էջ 81): Ինչպես տեսնում ենք, Սուքիաս վարդապետն ամբողջ ժողովածուն անվանում է «զգիրս զայս լուծմանց Սահմանացն Դաւթի», նկատի ունենալով նաև «Պատճառը»:

Այսպիսով, կարծում եմ, իրավունք ունեմ եզրակացնելու, որ «Պատճառ Սահմանաց գրոցն» և «Լուծմունք Սահմանաց գրոց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» մատենագրական միավորները ոչ թե առանձին աշխատություններ են, այլ միևնույն ստեղծագործության թյուրիմացաբար իրարից զատված երկու հատվածներ, որոնցից առաջինը, փաստորեն, կլանել է երկրորդը՝ մասամբ արժեզրկելով թե՛ իրեն և թե՛ մյուսին: Հետևաբար, դրանց միացմամբ վերականգնվում է միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի հիրավի բացառիկ արգասիքներից մեկը՝ իր ամբողջական տեսքով ու հմայիչ գեղեցկությամբ:

Քանի որ առայժմ այն չի ունեցել ամբողջական հրատարակություն, ուստի որոշեցինք ընթերցողի դատին ներկայացնել Երուսաղեմի սրբոց Յակոբեանց միաբանության թիվ 434 ձեռագրի** տեքստը՝ հուսալով, որ ապագայում հնարավորություն կունենանք մեզ մատչելի ձեռագրերի հիման վրա կազմելու դրա քննական բնագիրը:

Սույն ձեռագրի լուծմունքի և Ա. Մաղոյանի հետ մեր հրատարակած «Լուծմունքի» քննական բնագրի մանրակրկիտ համեմատությունից պարզվեց, որ թեև դրանք ընդհանուր առմամբ հոգեհարազատ են, բայց առանձին դեպքում ունեն նաև էական տարբերություններ, որոնք, իբրև կանոն, հօգուտ ձեռագրի են, բայց և կան դեպքեր, երբ նախընտրելի է քննական բնագիրը: Ներկա դեպքում հնարավորություն չունենալով մեկ առ մեկ ներկայացնելու այդ ամենը, բերենք առավել կարևոր փաստերից մի քանիսը: Բայց մինչ այդ ասենք, որ կառուցվածքային տեսակետից կա մեկ էական տարբերություն՝ քննական բնագրի 634-640 տողերը ձեռագրում զետեղված են բնագրի 602-րդ տողից հետո, սակայն դրանից աշխատության կառուցվածքը տրամաբանական տեսակետից ոչ միայն չի տուժել, այլև, թվում է, մասամբ շահել է:

---

* Ի դեպ՝ էջակալված են միայն կենտ էջերը, բայց զույգ էջերը հաշվարկված են որպես ինքնուրույն էջեր, այսինքն՝ չունի ա և բ էջեր:

** Օգտվելով պատեհ առիթից, ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել միաբանության նախկին լուսարարապետ Դավիթ արք. Սահակյանին՝ այս և մյուս ձեռագրերն ուսումնասիրելու հնարավորություն ընձեռելու համար:

Բերենք համեմատելի հատվածներից մի քանիսը:

| Քննական բնագիր | Ձեռագիր |
|---|---|
| 1. Ասեն ոմանք. թէ գոյ կենդանի, որ կէս նորին եղջերուի է և կէսն ի քաղէ, ասինքն՝ քօշին, բայց ոչ է. և թէ՝ գոյ կենդանի, որ յար և հանապազ զերկիր լեզու. և ոչ գոյ: Եւ կամ որ Շամիրամ ստարանէ, թէ աստուածքն շնորհեցին մեզ կենդանիս ոմանս, որք լիզեալ զԱրայ կենդանացուցին, լցուցանելով զմեր փափագ: Եւ անդուստ սկսեալ ասեն գոյ կենդանի յարալէզ: Բայց սուտ է և ոչ իրաւ (68-73տողեր): | Ասեն ոմանք. թէ գոյ կենդանի, որ կէս նորին եղջերուի է և կէսն քօշին, բայց ոչ է՛. և թէ՝ գոյ կենդանի, որ յար և հանապազ զերկիր լեզու. և ոչ գոյ: Եւ կամ զոր Շամիրամն ստարանեաց* այսպէս ասելով, թէ աստուածքն շնորհեցին մեզ կենդանիս ոմանս, որ լիզե[ա]լ զԱրայ կենդանացուցին՝ լցուցանելով զմեր փափագ: Անդուստ սկսեալ ասեն գոյ կենդանի յարալեզ: Բայց սուտ է և ոչ իրաւ (ներկա հրատարակություն, էջ 80): |
| 2. Ասացին ոմանք, թէ գոյ և այլ երկին զգալի, անտես յաղագս հեռի գոլոյն ի մէնջ յոր ոչ գոյ աստղ. և թէ է և թէ [ոչ՝]** ոչ գիտեմք, զի տարակոյս գոյ ի սոյն (82-84 տողեր): | Ասացին ոմանք, թէ գոյ և այլ երկին զգալի, անտես յաղագս հեռի գոլոյն ի մէնջ, յոր ոչ գոյ աստղ, և թէ է և թէ ո՛չ ոչ գիտութիւն, զի տարակոյս գոյ ի սոյն (ներկա հրատ., էջ 80): |
| 3. Արդարև մարդ է, որ զարդարէ զերկիր ի ձեռն բազմագործ արուեստի իւրոյ քաղաքաց և գեղից, ագարակաց և տանց, և զարմանազան շինուածոց, և բարձրաբերձ աշտարակաց՝ արօրելով զնա, տածել բուրաստանս և այգիս (138-141 տողեր): | Արդարև մարդ է, որ զարդարէ զերկիր ի ձեռն բազմագործ արհեստի իւրոյ. քաղաքաց և գեղեցիկ ագարակաց և տանց, զարմանազան շինուածոց և բարձրաբերձ աշտարակաց, արօրե՛լ զնա՛ տածել բուրաստան և այգիս (ներկա հրատ., էջ 81): |
| 4. ...Կատարեալ իմաստասէրն անհասին տգիտաբար ոչ ցանկայ, այլ յորժամ գիտենայ թէ անհաս է, դադարէ. զի և այս իմաստասիրութիւն է և ոչ է իբրև զտոկոսապահանջ անմիտ արքն, որ խնդրեն տոկոսս ընչիցն, այսինքն վաշխ ընչիցն, և վաշխին այլ վաշխ (523-526 տողեր): | ...Կատարեալ իմաստասէրն անհասին տգիտաբար ո՛չ ցանկայ, այլ յորժամ գիտենա՛ թէ անհաս է, դադարէ, զի և այս իմաստասիրութիւն է և ոչ է իբրև զտոկոսապահանջ անմիտ արքն, որ խնդրեն տոկոսս ընչիցն, այսինքն վաշխ և վաշխին այլ վաշխ (ներկա հրատ., էջ 86): |
| 5. Եւ նման լինելն աստուծոյ այն է, որ ի բնաւին արդարութիւն մնայ և բարեպաշտախոհեմ և արի և ողջախոհ (576-578 տողեր): | Եւ նման լինելն Աստուծոյ այն է, որ բնաւին արդարութիւնն մնա և բարեպաշտ կա, խոհեմ և արի և ողջախոհ (ներկա հրատ., էջ 86): |

Անշուշտ, կարող ենք բերել նորանոր օրինակներ, սակայն, կարծում եմ, այսքանն էլ բավական է համոզվելու, որ հրատարակության ներկայացվող բնագիրը շատ դեպքերում առավելություն ունի տպագրվածի համեմատությամբ և կարող է օգտակար լինել անանուն «Լուծմունքի» վերջնական քննական բնագիրը կազմելիս:

Իսկ թե ո՞վ է լիմաստասիրական այս հիասքանչ ստեղծագործության հեղինակը, առայժմ չեմ ցանկանում անդրադառնալ այս հարցին: Ասեմ միայն, որ դեռևս քսան տարի առաջ Ա.Մուրադյանի հետ մասամբ փորձել ենք լուծել նաև հեղինակային պատկանելության հարցը, ուստի վերագրել ենք այն 11-12-րդ դդ. ականավոր գիտնական, բանաստեղծ ու փիլիսոփա Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գրչին: Մեր տեսակետը, իհարկե, մասամբ արժանացավ առանձին հայագետների հավանությանը, բայց, խոստովանում եմ, բերված ապացույցները լինելով կարևոր, բավարար չէին հարցի վերջնական լուծման համար: Անցած տարիներին շարունակելով այդ ուղղությամբ որոնումներս, հավաքել եմ մի

* Ի դեպ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի հեղինակները «ստարանեմ» բառահոդվածում ի թիվս այլ օրինակների տալիս են նաև՝ «Զոր Շամիրամ ստարանեաց տիկինն (վասն արայի) Լծ. սահմ.»:

** Փակագծի միջի ոչ-ն ավելացրել են քննական բնագիրը կազմողները՝ ելնելով շարադրանքի տրամաբանությունից:

շարք նոր փաստեր ու փաստարկներ, որոնք մտադիր եմ առաջիկայում ներկայացնելու առանձին հոդվածով:

Տեքստը տպագրության ենք պատրաստել գրեթե առանց միջամտության՝ պարզապես բացել ենք կարճագրությունները, սեպաձև փակագծերով ավելացրել բացակայող տառերը կամ բառերն ու բառահատվածները, լրացրել կետադրական նշանները՝ համապատասխանեցնելով դրանք արդի հայերենի կետադրությանը:

*Հ.Գ.Միրզոյան*

# ՊԱՏՃԱՌ ՍԱՀՄԱՆԱՑ ԳՐՈՑՆ

Աստուած անպատում և անպարագրելի է գոլով բնութիւն յամենայնի եղեալ. անհաս եղականաց յաղագս անեղ և անսկիզբն գոլոյ նորին. և կրկնակի անբաւ ըստ չափոյ և սահման. ճանաչի տեսոյաց սկզբամբ և կատարածիւ, զի անուր և անուստ*, անկեալ և անեզր, անժամանակ և անփոփոխ, զոր ոչ է ումեք կարողութիւն իմանալ մտօք և կամ բանիւ պատմել զանճառելին բանականաց՝ յարազգաւնիցն և մերձ եղելոյ նորին գերազարդ տէրութեանն և ի նմանէ միշտ լուսափայլեցեալ դասապետութեանցն: Արդ անզննելի և անքանակ աստուածպետականն անբաւազօր և անկարօտ ամենայն իւրոց բնութեանն՝ յանճառ և բնութեամբ յինքեան ունել բարութեանցն ի բնաւից չարժեալ յինքենէ եղելոյն. որոց նախ և առաջին իմանալին իմանայր երկին և զնոյն անհիւթ անթիւ հրաբուն սեռիցն բազմութիւն բնակիչս նորին հո՛ս և առ դուրս կարգեալ ի սպաս պաշտամանն սպասաւորս իւրոյ տէրութեան լաւ կարգի: Յետ որոց և զկնի զգալի ձգեր պայմանակք զարմանազան և գեղեցկազեղք, զարդարեալ ամենապայծառ հրաբոյրոք և բանիւ լուսատրօք, որ միշտ և ցանկ հիւս շրջագայութեամբ անմաշ և անճայթ գոլ դյուութեամբ. զհաստատիլն հրապարակէ զօրութիւն: Իսկ յերկու Բ հակընդդէմ ունայ նիւթից ի մի հասարմամբ երևելի երկիր յատակեա՛ց և կառոյց հաստատուն, զոր զայսյարուն յոքնազան և խառաբայլբոց բուսմամբ անկոցն եցոյց վայելուչ: Յորմէ և նոյն բնութենէ և ի նոյնն առ կայացեալ սեռս էատեղծ կենդանեաց, զորս ի բազումս և յանթիւ բաժանեաց տեսակս և յանհաս գոյութիւնս. զոմանս յօդ պարսալ և զնոյն պերճ փութմամբ զարդարող և զայլս յերկիր ընթանալ ի վերայ երեւաց: Յորմէ ելինն և նոյնն դառնան մահուամբ ըստ հրամանի: Այլ ծովու արար լողիչք և ի նա՛ լինել կենդանիս, զորոց համար ոքքանեւոցն զհանեն, որ արար՝ զնոցին գոյութիւնս: Յետ որոց յեղեմ անկեալ դրախտին և լցեալ անմահ տնկով վայելուչ՝ զպատկերաւն իւր պատուել և ձեռամբ ստեղծանելն ե՛դ զԱդամ նմին երկրագործ: Անձնիշխան գոլով, զոր ասացն: Պատուէր ասայր և դնէր առաջի՛, զի կամօք և ոչ հարկաւ լիցի բարութիւնն, քանզի կրկին ի մի գոլով կենդանի, կրկին և տնգոց գործոնեայ, որ ըստ այսմ և այսոյց վայելող, նիւթով զնիւթ փարծող և պսիհիչ, և անհիւթ բնութեամբ, որ տիրապէս ի մեզ է մարդ բանականն, բնաբոյս բարուք իմաստութեամբ յաստուածայինսն միշտ խոկացող, ուր ոչ պահեաց, զոր առն յաւանդի՝ պատուէր և հրաման անհմաստ և ոչ խոհեմ ընտրութեամբ, բայց զի ոչ ինքնագլուխ կամաւ ըստ երիրէր, այլ պատրանօք թակարդ եղողին ներելի առնուն պատուհաս, որ յոյս գոլով դառնալով դառնալ, ուստի աքսաքս ելա՛ն իրսամբք: Իսկ որ խաբեացն և զդառն եղիր մահարար, ոչ ի նոյն շատացաւ, այլ միշտ և ցանկ ի մարմնոյ թաղէր հեշտութիւն: Խայթոց մահու խաբէութեամբ որպէս հօրն և քնաւ նովաւ սերելոց, որոյ կամաւ մարդիկ փութային զհետ պատրողին. մինչ բնաջինջ զբնական տուժանն. զիմաստութիւն զխոկու՛մն և զհանճար, յոր յայեցեալն, որ եա ի սաստ շարժել բարկութեամբ. մի՛ մնացէ ի մարդկանն հոգի հանճարոյ և իմաստութեան: Սակս մարմին դոցա՛ եղելոյ, յորմէ վարանեալ մարդիկ վտարմամբ զերկրային ցանկային ունել եղջեր հանգէտ քաղցրութեամբ զմարմնոյ հեշտութիւն: Իսկ որ արարն, ոչ պաղարէ ի խնամ առնելոյ, զի և ոչ կամօք. այլ պատրանքն առնէր անիմաստ: Վասն որոյ ի դէպ և պատշաճ ժամու պիտոյիք օգնէր նեղելոց: Երբեմն սաստիւ խնամէր հայրօրէն, երբեմն խրատէր դառնագոյն բարկութեամբ, զնոյն յօգուտ կոչոյաց օրէնս տայր յօգնութիւն, մարգարէս առաքէր զգուշարար և այլ և այլ խնամօք վարէր մարդկան յօգնութիւն: Քանզի պատրել այս բնութիւն՝ ոչ գոլով մեղասեր և կամ էութեամբ զչար յինքեան ունելով, այլ անգէտ գոլով, պատակաւ վարկանէր և բնութեամբ յինքեան զնոյն եղեալ: Բայց ոչ այսպէս, այլ զի աստուածաւէր ի ստեղծմանն եղեալ և բարի՛ և այլոյ զմոլարն ընթացեալ ճանապարհ խաբէութեամբ, յերբեմն և յոլով ժամանակաց և աւուրց անցելոց աստուածախոհ զարթնոյր խնամօք ի խոր յիմար թմրութենէն և սկիզբն առնէր ի հայրենիսն, դառնայր տուն բնաւիր յինքեան գոլով իմաստութեամբ: Օրինակ ի քնոյ իմն զարթեալ, ճանաչէր զբնութեանն իւր պատուականութիւն, յարդ քաղեալ

* Ձեռագրում անուստ է: Ուղղել ենք ելնելով շարադրանքի տրամաբանությունից:

մեղաց զազրութեամբ և աստուածութեան՝ ոչ համբերէր, նոյնպէս մնալ աղտեղեալ, յոր հայէր ի բնութիւնս, քննէր զորպէսն դորա՛ և իմացեալ առողջին զօրութեամբ, յայտնիկ զօրացեալ՝ բարի զմարդիկ էութեամբ և ոչ ստեղծեալ չարասէր, որպէս և կարծէր: Ուստի քաղաքական հաստատէր օրէ՛նս, արդարութեան դատաստանի և կշիռս իրաւանց, պատժե՛լ պարտ է, ասէ՛ր, չարագործացն, և պատուել զբարեգործսն: Զառաքինութիւն մասն ասացին հոգւոյ և զարդարութիւն և զոչ նոյնպիսիս անիրաւութիւն և չարութիւն նմին: Այնքան կարացին տրամաբանութեամբ իմաստութեան, մինչ որ թողին զորպէսն բնութեանս, զոր ոչ իմացան և յետ այսքանեաց* բարութեան ծանեան, զի բնութեամբ էր սիրող Աստուծոյ, տռփող նորին բաղձանօք, ի յոյզ ապա ելին արարչին, ի խնդիր մաին ստեղծողին. անյապաղ խուզմամբ քննէին, և զի ոչ գոյր հոգի նորա ի սոսա՛. թէպէտ նովաւ զօրացան ի նոյն անվրէպ իմանալ զատէրն բոլորից: Սկսան տարելաց իբրև ատերն երկիր պագանել, ի մարդոյ տիպ ձուլել քարանց և փայտից և անշունչ ոմանց և շնչաւորաց, ի չափ արարչի պաշտօն ընկալեալ ընծայէին, և բնաւից էից քննութեամբ իմաստունք եղեն անուանեալք, քանզի զերկիր ծանեան քննութեամբ և յօդս ելին խուզելով և զպարունակ նորին իմացան ցանկաթաւալ և մշտագին զերկրաւ պատելով ի լուսաւորաց մարմնոց: Յետ այսր անցան քննութիւն, զորս յայլ և յայլ ծանեան եղեալ զնոսին կաճառանս և կրկին ընթացս անմոլար բնաբար եղեալ յԱրարչէն. ի սոյն իմացան խուզման, այլ սոցին արարիչ և կառավար, մեծի այս մարմնոյ քան զոր ունէին ի պաշտօն զաւարերս, յորս շինել անուն տաճար մեծ և բագին ահագին, յոր մակագրեցին լինել ամենայն էիցս էակին և տուն Աստուծոյ անծանօթին, զի մարդոյ իմաստութիւն ասացին ոչ կարող հասանել ի նա՛ գիտութեամբ, որ յանէից և յոչ գոյից զիւմայնս և բնաւից մասանց բոլորիցս արար զէութիւն: Վասն որոյ անծանօթ եղան անուն անեղին: Եւ արդ յորմէ այս եկեալ եղև պարգևս ի մարդիկ իմաստնանալ խոհեմութեամբ ի բնականն, եթէ ոչ յեղաղէն զնոյն ի նոսա յԱստուծոյ և կամ երբ և ուր, եթէ ոչ յԱթէնս և հելլենական վարժեալք ի միջի իմաստասիրութեամբն և ուսմամբ: Արդարև սոցայս իմաստութիւն էր յիշումն անառակի որդոյն զհայրենի տանն գեղեցկութիւն, քանզի հելլենական իմաստասէրքն և այնոցիկ ուսմանցն աշակերտքն ամենայն գրեա՛ թէ եղեն բերան մարդկութեանս և խոկումն իմաստութեամբ զհայրենին տան յիշել զվայելչութիւն ի միտս իւր զալովն: Զոր տեսեալ Հայրն երկնաւոր, ընդառաջ ելեալ համբուրիւ և զիրկս արկ զորովմամբ, որպէս և եղև իսկ: Քանզի զորդին իւր միածին, զհամագոյն և զհամապատիւն զոյով բնութեամբ զզոյգն և զհաւասարն յամենայնի, որ ոչ զոք ի տեղ նորին ունէր իբր զնա՛, քանզի նա միայն ի նմանէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս անսկիզբն ելով ընդ նմա և անեղ: Մինչ մարդիկ բնաբոյս և ի շնորհաց Աստուծոյ բաւեալ իմաստութեամբ զարարիչն իւրեանց խնդրէին և զհայրենին յուզէին տուն: Առաքեաց որ եկն և միացաւ ընդ բնութեամբ մերոյ՝ պարանոց զիրկս արկեալ նմա յամենամաքուր արգանդի կուսին, ուստի յառաջ եկն և ծնընդեամբ մարդ եղեալ ստուգաբար պատճառ զիմաստութեամբ խնդրել մարդկան զնա՛ լինի, որ և յաճելն հասակաւ մարմնոյն աճէր և իմաստութեամբ ուսեցելովն բնութեան և որ Աստուծոյ հօր իմաստութիւն խոհեմութեամբ զալգանայր մարդկութիւնս և թէ պատճառ առին նորայն մարդանալ զմարդկան ինքեամբ զտեալ իմաստութիւնն իմաստութեամբ փրկէ և զնոսին՝ ըստ ասելոյն, թէ ի ներքոյ ոտան վերինք եկեղեցոյ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ և արդարև ոչ գիտէին իմանալիքն այսքան յոքնակի՛ զիմաստն Աստուծոյ, մինչ ակարութեամբ առնել զօրութիւն և խոնարհութեամբ վանել զպատելազմն և որ արարն իսկ: Քանզի ոչ զօրութեամբ վարեցաւ զմարդիկ որդի առնելն երկնաւորի, յոր գոյր և տեղի բամբասանաց բանսարկուին, այլ իրաւամբք և արդարութեամբ մարդով զմարդ ապրեցոյց և նովաւ յաղթեաց յաղթողին, մահուամբ զմահ սատակեաց և յարութեամբ յարոյց զամենեսեան, և զի՞նչ այլ բազմապատիկ իմաստութիւն, քան զայսոսիկ, որ ոչ միայն փրկեաց՝ ում ել յայց, այլև ափ ի բերան խայտառակեաց նշաւակեալ յանձին իւրում, զբանսարկուն ի յարութեանն իւրում. որ և յետ կամաւոր չարչարանացն եօրեա՛յ թաղմանն և կայտառապէս յարութեանն յառաջ քան զգոյանալ տարրեղէն մեծագոյն այս յատակի զընտրեալ և զինքեամբ կոչեցեալ աշակերտսն ընդ ամենայն առաքեաց աշխարհ, մինչ յեզերս տիեզերաց, յամենայն հեթանոսս քարոզել զբազմապատիկ իմաստութեամբ նոցա եղեալ փրկութիւն յԱստուծոյ, որք ընթացեալ ի մայրն և ուր սկսաւ իմաստութիւն Յոհաննէս և Պօղոս, որ և եհաս մինչև յԱթէնս, և ուր անծանօթին էր կանգնեալ բագինն աստուծոյ, որոց քարոզեալ հաւանին փոյթ առ փոյթ ճեմարանի՛ զոլով աշակերտք և որպէս ծնօղ իմաստութեանն եղեն: Այսպէս հիմն եկեղեցոյ և հաստատութիւն նոքա եղեն, իմաստութեամբն Աստուծոյ բարձրացեալ ելին յայս սլատի, զի թէպէտ ասէ առաքեալ. թէ իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած. հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեան զհաւատ: Ոչ զայս ասէ, թէ մեղ դնէ նոցին, թէ է՛ր ոչ ծա-

* Ձեռագրում՝ այլ բանեաց, բայց ուղղել ենք՝ ելնելով շարադրանքի տրամաբանությունից:

նեան, այլ թէ ջանացին գտանել զճշմարիտն Աստուած իմաստութեան քննութեամբն և տկարացան, զի մի՛ պարծեսցի մարդ անգէտն գտանել զարարիչ, այլ նա՛ պարծեսցի ցուցանել զինքն արարածոց: Բայց և յայլ տես յեղանակ իմաստութեանն Աստուծոյ, քանզի սովորեցին մարդիկ մարդոյ մեռելոյ երկրպագել՝ այսր աղագաւ մարդ եղև և մեռաւ, փայտի և վասն այնորիկ ի փայտի խաչեցաւ, քարի և վասն այնորիկ քարեա՛յ դնէր տապանի: Արդ այսպէս յոյժ զգոյշ պիտանացու յիմաստասիրութիւն, մինչ զի յեկեղեցոյ սրբոյ հաստատեալն ոչ խոտեալ եղև ի նմանէ և անպիտան: Քանզի վարդապետք նորին՝ նախ նովաւ եղեն կրթեալք իմաստութիւն գիտութեան և ապա՛ կարգեցան առաջնորդութիւն, որպէս Նիւսացին և Նազազացին, Կապադովկացին և Անտիոքացին: Եւ քանզի ոչ եղև խոտեալ ուսումն իմաստութեան, ծանեաք ահա՛ իսկ յամենայն լեզուաց և ազանց որպէս ի գէշ այծուիք ժողովէին ուսանել ըդծիւք փափագմամբ, վասն որոյ բարև մնալ ասէին ամենայն երկրական հեշտութեանց, զոր ոչինչ պատուականագոյն քան զնա յաչս իւրեանց համարէր, որք զայն սիրէին: Որպէս և ի մերոցս ոմանք ի բոլոր սրտէ սիրեցին զԱստուած և զառ ի նմանէ իջեալ մեծագոյն պարգևս առ մարդիկ, որոց ոչ մոռանոի մինչ իսպառ անուանքն ի մէջ մերսալը ազանց հայկազնեաց գովեալք յաւիտեան. և յիրաւի, զի զամենայն անտեսեցին, որ ինչ յաշխարհիս, զբոլոր սորա՛ ցանկութիւն և զամենայն հեշտութիւն՝ զազգ և զգաւառ, զինչս և զստացուած, զեղբարս և զհարս և միանգամայն զամենայն իրս երևելիս և զբազում թողեալ ի թիկունս աշխարհի, ի մայրն ընթացան վարժից, ի տունն իմաստութեան, ի ճեմարան կրթարանին. ուր բազում ցուցեալ հանդէս երկոց սաժանմանց՝ մինչ ի սակաւ յոլով յինքեան յամբարեալ ժամանակ գիտութիւն, փոյթ սոփերք և քա՛ջ եղեն փիլիսոփայք անուանիք, մինչ ոչ միայն տեսողացն և կամ լսողաց, այլ և հանուրց լինէր զարմացումն. և զինչ յեա այսորիկ յաշխարհն իւրեանց մեծաւ խնդութեամբ դառնային. ոչ պատուոյ աղագաւ, զոր և ոչ առին հատուսաի, այլ յազինս իւրեանց սերմանել զուսումն իմաստութեան: Արդ եկեալ սկիզբն առնել սկսան բարութեանց և աննախանձ բաշխել խնդրողաց. զինքեամբ բազում առեալ երկսամբք զհետութիւն, որք ոչ միայն ոչ ընդունեցան, այլ և հենգնեցին ընդդէմ յառնելով՝ զի՞նչ մեզ բաղբաղիք, ասէին, սեքևեքսնքս ձեր անպիտան բնաւին մեզ թուին, առաւ և ունայն ձերդ իմաստութիւն, անգործ, ասեն, են ձեր աշխատանք, որոց տխրել թախծանօք՝ ի խոր խոցէին տրտմութեամբ. և զի՞նչ ապա՛ առնէին, ողբերգական բան շարադրէին, որպէս մինն ի նոցանէ զերահրաշն և զարմանալին. Ողբամ զձեզ Հայոց մեծ և մեծաց եկեղեցի: Ըստ այսմ առնէր գերահռչակեալ անուն փիլիսոփայս Դաւիթ, որք յորժամ ոչ միայն ոչ ունէին յանձին* զուսանելն, այլ և եղծանել կամէին զիմաստասիրութիւնն և առ ոչինչ համարէին: Անօգուտ և անպիտան ասէին, ոչ յԱստուծոյ ըստ Պօղոսի աստուածային և ոչ ի նմանէ իջեալ առ մարդիկ ոչ այլ ինչ պատուական քան զնոյ, և ոչ ըստ Սողոմոնի այլ ինչ գեղեցիկ, և ոչ ըստ Սիրաքայ յԱստուծոյ առեալ, զի ի սքանչելեաց նորա փառս հանցեն տուողին, այլ զընդդէմն այսոցիկ ոչ իր պիտանացու, և ոչ էութիւն պատուական, նման զի սոյն ժպրհեալքն կարծեա՛լ և արդար հնոց ոմանց սոցին բատակաց, որք կամեցան բազում և երկար բանիւք եղծանել զիմաստասիրութիւն, Պիհռոնի ոմն իմաստակի եպիկուրացոյ, և ստոյիկեանցն ձեռնարկողացն ընդդէմ իմաստութեան և կամեցողացն եղծանել զնոյն, որոյ վասն անխոնջ երկամբք բազում առեալ զանձն իւր տաժանման, զիրս ընդդէմ սոցայ, որպէս և հնոցն և կամ ի մի՛ դնելով զնոսա ի տեղ անմտաց և դնէ բան ըմբերանիչ՝ ոչ կարծեցելոց բարի ոք յաղագս իմաստասիրութեան և քանզի ցուցանէ սա՛ գեղեցիկ գոլ զսա՛ և ցանկալի քան զամենայն երևելի պատուականութիւն և զայս հնարս իմացեալ իմաստնոյն, ազգասիրութեամբ եկեալ յայսոսիկ. իբրու զի յորժամ տեսցեն զսահման և զիտողութիւն իմաստասիրութեան, ի սէր շարժին նմին և բաղձան ուսանել՝ որ և այսպէս սկսանի ասելով.

Բան. Որք մի անգամ իմաստասիրութեան ցանկան բանից:

Լծ. Ըստ այսմ ասէ օրինակի, թէ ոչ որպէս դուք կարծէք ոչ գոլ զիմաստութիւն և ոչ էակացեալ, ով անիմաստ Պիհռոն և որք ըստ քեզ անմտացեալք էն, այլ որք ցանկան նմին, ոչ միայն եթէ անպիտան զնա վարկանին և ոչ էացեալ, այլ թէ և մատին միայն մտաց ծայրիւ առնուն ի նորա քաղցրութենէն, ամենայն որ ինչ երևելիս կարծի, բարև մնալ ասեն, զոր օրինակ եղեալ ի սեղան զանազան կերակուրք կարծեք բարեհամք և ոչ էութեամբ. իսկ ճաշակողք նորա ոչ տեսեալ զմեղր քաղցրութիւն՝ զնոսին կարծեն բարեհամս: Եւ յորժամ դէպ լինի ծայրիւ մատին միայն ճաշակել, ապա՛ թողեալ զամենայն և ի նմանէ միայն ցանկան լնուլ զորովայնն: Ըստ այսմ առնէն օրինակի, որք սակաւ միայն առնուն ի նմանէ. որպէս և արարիչն, որք միանգամ քաղցրացան ի նոյն, զի ոչ միայն ի ստացուածոց և յերկ[ր]եղէն հեշտութեանց ի բացեայ, այլև զինքեանս իսկ ուրանային՝ մինչ զի մերկ և բոկ, քաղց և ծարաւ ի սոյն տքնէին: Եւ այս այնք աղագաւ լինէր, զի մտաց նոցա բացեալ տեսութիւն ծանեան և ոչ

* Ձեռագրում հանձէին է, ուղղել ենք:

ցեղեցիկ բան զիմաստութիւն յերևելեացս, և եթէ այսպէս զիա՞րդ ապա՛ յանդգնեաղ այնքան ոմանք, մինչ ոչ էացեալ զնա՛ և ոչ գիտութիւն զովելի կարծել: Եւ զինչ այսոցիկ պատճառ, եթէ ոչ ի ծնէ կուրաց նմանիլ, որ թէ և բազում անգամ ճառես յարարածոցս ինչ, նոցա ո՛չ իմանան և կամ որոց զորընզացըն ոչ առողջ ունին, չէ՛ հնար նոցա ասել յաղագս հոտոց ինչ: Ըստ այսմ ինչ տեսցես ինձ զայնոսիկ, որք կամիցին ի դերև հանել զիմաստասիրութիւն, վասն որոյ ի վար արկեալ բազում աշխատանս, երանելիս այս Դաւիթ կամի ցուցանել զպատուականութիւն, զէութիւն և զսահման սորին, զի թերևս տեսեալ զեղեցկութիւն սորա, ցանկասցին: Բայց ոչ այնպիսեաց ոմանց, որ և ցարդ ևս կուրացեալ են մտօք և ոչինչ զսա համարին. ըստ առողին, թէ որպէս զինդ ոսկի ի քիթ խոզի, այնպէս և խրատ յունկն անմտի:

Բան. Եւ անդստ իսկ ապա էակացն:

Լծ. Զէակացն ասելն մակացութեամբ ըստ այսմ է իմանալ. մի և Բ յեղանակաւ, քան ամենայն արարածոցս գոյութեանցն այլ և այլ նոցա եղելոցս յաղագս նոցա լինելոյն է:

Բան. Էակք ասի, որ ոչ միայն զգալեաց, այլև իմանալեաց, նա՛և արարչին: Եւ իմաստասիրութիւն զիտօղ ամենայն էիցս է: Այսր աղագաւ էակացն մակացութեամբ, այսինքն՝ գիտութեամբ զնոցին իսկ զանեն չանս ինքեան փոխեն, որոց կամ լինի զէակըն գիտել: Զամենայն տեղչանս իրեանց զոր ունին յաշխարհի և յիրս նորա՛ ի նա՛ փոխեն և կամ զտեղչանսն, որ առ էակ իմաստութեանն լինի: Քանզի կամ սորա՛ է իմաստասիրութիւն գոյ և էակ դնել: Զայն աստ տեղչանս, որ լինի յէութիւն իմաստութեան ցանկացօղացն նմա ինքեանց սեփականեն: Որպէս և ասէ, թէ գիտութիւն էակացն է իմաստասիրութիւն:

Բան. Եւ արդ քանզի բազում:

Լծ. Արդարև, որ ոչ բազում բերէ յինքն յօժարութիւն, ոչ կարէ՛ այսպիսի գեղեցիկ ժառանել հանդէս ուսանելոյ:

Բան. Բեր զաստուածայինն:

Լծ. Աստուածայինն զսա՛ անուանէ ըստ Պօղոսի, քանզի նա՛ ասէ, թէ իմաստութեամբն Աստուծոյ:

Բան. Եվ հանդէս՝ զի ամենայն որք ուսանին և որք ուսուցանէ նոցա իբրև ի հանդէ՛ս լինել արիութեամբ:

Բան. Այլ առ եզր աստուածային խոստմանց:

Լծ. Աստուածայինն սա՛ է որպէս սասացաք, զի ոչ այլ ինչ պատուական իջեալ յԱստուծոյ առ մարդիկ իբրև զսա, և խոստման, զի ամենայն որ ի ծայր աշխատութեանց պտուղ տեսանէ, խոստումն է պտուղ աշխատութեանց: Վասն այսորիկ ասէ՝ խոստումն, զի թէպէտ եւ դժուարին աշխատելն, սակայն յեզրանալ գործոյն առնու զհեշտութիւն խոստմանն: Զօրինակ՝ մշակ[ք] վարձուն խոստման յուսովն համբերեն զդաժանութիւն աւուրն: Եւ քանզի աստուածայինն ասաց զխոստումն իբր թէ յԱստուծոյ խոստացեալ, որոց որք յայս հանդէս մտանեն իմաստութեան, առնուն զհամեղութիւն գիտութեանն, որ է պտուղ տաժանմանցն:

Բան. Բայց պարտ է և արտեստի հաւանել որոշման:

Լծ. Գոյ արտեստ իմաստասիրութիւնն որոշողական, որով կարէ զիտող նորին բաժանել զիրաւն ի ստէն և զոչ էն յէէն, որպէս և կամի առնել:

Բան. Որպէս եղջերաւաքաղն և յարալէզն:

Լծ. Ասեն ոմանք, թէ գոյ կենդանի, որ կէս նորին եղջերաւոր է և կէսն քօշի, բայց ոչ է՛, և թէ գոյ կենդանի, որ յար և հանապազ զերկիր լեզու, և ոչ գոյ. և կամ զոր Շամիրամն առաքանեաց այսպէս ասելով, թէ աստուածքն շնորհեցին մեզ կենդանիս ոմանս, որ լիզե[ա]լ զԱրայ կենդանացուցին՝ լցուցանելով զմեր փափագ: Անդստ սկսեալ գոյ կենդանի յարալեզ, բայց սուտ և ոչ իրաւ:

Բան. Եւ ոչ որչափ ինչ մերս ստեղծէ:

Լծ. Տեսեալ մարդիկ նկարագրեն կենդանւոյ կերպարան և ո՛չ գոյ, զի դնեն զդիր երեսացն մարդոյ և զանձն զազանի՝ նկարեն կռաշուրքն իբրև զարծուի և չորքոտանի իբրև զանիւծ, և այլ բազում սոյնպիսիք. վիշապ զարշապարաւ և թևաւորք ստեղծին, միայն մտօք և ոչ էութեամբ, բայց իմաստասիրութիւն ոչ այնպէս, այլ ասեն, թէ լցեալ ստուգապէս:

Բան. Որպէս անաստղ երկին*:

Լծ. Ասացին ոմանք, թէ գոյ և այլ երկին՝ զգալի անտես յաղագս հեռի գոլոյն ի մէնջ, յոր ոչ գոյ աստղ. և թէ է և թէ ո՛չ, ոչ գիտութիւն, զի տարակուս գոյ ի սոյն:

Բան. Եւ հակոտ:

Լծ. Եւ ոմանք այլ ինչ ասացին, որ երկրայս է լողացն, քանզի գոլով այս երկրի ներքոյ փորուած, որպէս և վերոյ, և շրջազայութեամբ երկնիցն լուսաւորի ներքի երես երկրի՛ս յարեգակնէ և յայլ լուսատրացդ, որպէս և այս արդար: Յօրմէ մտածեալ, ասացին անդ կեն-

---

* Ձեռագրում երկրի է:

դանիք, որոց անուանեցին հակոտնայք. իբր թէ հակ և ընդդէմ մեր են և կամ թէ զարշապարք ընդ մեր են դէմ զարշապարաց նոցա, իսկ թէ զի՞նչ և կամ որպիսի կենդանի, անկարանան ասել, զի ոչ տեսեալ ումեք է աչօք և յերկբայս են վասն նոցա, թէ է՛, թէ ոչ: Բայց իմաստասիրութիւն ոչ երկբայաբար, այլ ստուգաբար ունի զգոյութիւն, քանզի եթէ են ի վերայ գոյացելոցն ոչ է, այլ յանգոյիցն և կամ յերկբայագոյիցն, որպէս ի յարալեզն կենդանի և յանաստղ երկնիցն, որ տարակուսանօք է էութիւնն և ոչ էութիւնն:

Բան. Եւ վասն զի ոմանք յիրողութեանցն գոյացելոցն ոչ հասարակութիւն ունին առ միմեանս, այլ և զանազանութիւն:

Լծ. Զի թէպէտ ասաց, եթէ պարտ է խնդրել, զի եթէ են ի ստագոյէն, որ է եղջերաքաղն և երկբայ[ա]գոյէն, որ են հակոտնայքն: Այսպէս պարտ է և յէումն խնդրել զէթէ են, որով գտանէ, թէ է՛ և գոյութիւն ունի: Եւ յորժամ իմանայ, թէ է ստուգապէս և էութիւն ունի, պարտ է և զինչեն խնդրե՛լ, զի թէպէտ և ամենայն էիցս առհասարակ է՛ ասի, այլ ոչ եթէ միապէս էութիւնք են, այլ՝ այլ և այլ: Եւ գիտել պարտ է, զի ամենայն արարածական բնութիւնքս Բ հասարակական անուամբ պարագրին: Առաջին և ընդհանրական է ասել բնաւից. որ ոչ միայն եստ անուն զգայական միայն պարագրէ գոյութիւն, այլ և զիմանալիսն՝ զկենդանիս և զանկենդանիս: Իսկ երկրորդ անուամբ կենդանի ասել զամենայն պարփակեմք կենդանիս և զանշունչ կենդանիս, որ են տունկք, բայց ոչ են կարող անուանքդ այդոքիկ յայտնել զբնութիւն ամենայն իրաց: Վասն այնորիկ յորժամ իմանամք, հարցանեմք թէ է, պարտիմք և զի՛նչ են խնդրել՝ թէ ոսկի է, թէ երկաթ, կենդանի է, թէ անկենդան, քանզի բնաւորեցան ըստ այլ և այլ գոյութեանցն այլ և այլ պատուհել անուան, զի ոմանց քար ասի, և ոմանց փայտ, ոմանց ոսկի, և ոմանց պղինձ: Եւ այսր աղագաւ ասէ, թէ ոմանք ի յէիցն հասարակութիւն ունին ըստ էութեանն, ունին և զանազանութիւն ըստ գոյութեանցն և անուանցն պատուհման: Վասն որոյ հարկաւոր է ի յէէն և զինչէն խնդրե՛լ: Եւ որպէս սնուն ոչ յայտնեաց ասելովն զիրաց գոյութիւն. զի հասարակական էր: Վասն որոյ հարկ եղև և զինչեն խնդրել: Եւ զինչ է է՛ ասելովն ծանեաք, թէ երկաթ է: Այսպէս և միւս այլ ընդհանրական անուամբն. որ թէպէտ նուազ քան զառաջինն, այլ և սա՛ հասարակական է, որ է կենդանին. ոչ եմք կարող առաւ միայն ասելովս իմանալ զէութիւն և տեսակ կենդանւոյն: Քանզի այս հասարակ անուամբս ոչ ճանաչի կենդանին որպէս առանձնական անուամբ, որպէս ասել մարդ կամ ձի: Քանզի բազում անգամ սահման իրացն յայտնեն զինչեն, իսկ կենդանին անուն ոչ յայտնեն, յոր յաւելուլ պարտ է և զինչ ասէ կենդանի: Եւ յորժամ ասէ մարդ՝ յայտնեցաւ անուամբս. թէ զինչ է կենդանին, որ է բանաւոր մահկանացու: Այսպէս և ձիոյ անուն յայտնեն և զինչէն, որպէս և սահման ձիոյն՝ չորքոտանի, վրընջող, երկա[յ]նաբա՛շ: Իսկ կենդանին անուն, որ է հասարակական, ոչ ցուցանեն, որպէս և ոչ են է՛ անու՛ն կարող ցուցանել զինչեն: Եւ յորժամ ճանաչի զինչեն, յայնժամ և զվասն էրն պարտ է իմանալ զմայրոյն, յոր և ասէ:

Բան. Թէ վասն զայլաբերելոյ զերկիր:

Լծ. Որ արդարև մարդ է, որ զարդարէ զերկիր ի ձեռն բազմագործ արհեստի իւրոյ՝ քաղաքաց և գեղեցիկ ագարակաց՝ և սանց, զարմանազան շինուածոց և բարձրաբերձ աշտարակաց սրօրէ՛լ զնա, ածել բուրաստան և այգիս:

Բան. Ի պարունակողէն զպարունակե[ա]լն նշանակել:

Լծ. Ոչ ինչ ի սոյն տարակոյս, զի սովորութիւն էր իմաստասիրացն երկրի երկին անուն վերածայնել, երկին՝ երկի՛ր: Քանզի ծայրիւք իւրեանց յեռեալ ընդ միմեանս են երկիր և երկին: Վասն այնորիկ միով անուամբ անուանի ըստ օրինակի տան. քանզի թէպէտ և այլ և այլ գոյ ի նմա անուանք, սակայն միով անուամբ պարունակեն, զի տուն ասեն՝ վարտաւծի տանն տուն, և յատակն տուն, և որմունքն, և ձեղունքն: Այսպէս է իմանալ և զերկիրս երկին ասելովն

Ընդ որս հանդերձ աստուծով առաջիկայ պսակք: Որ մինչև ցայս վայր բանք էին առաջաւորութիւն և գործաւորութիւն: Սկզբնադրութիւնք էին բանիցս իմաստութեան, այլ և խրատականք և յորդորականք, ի բաց դնել զամենայն կենցաղական հոգոց ցանկութիւն և միայնում ցանկալ, որ արժան է, այսինքն՝ իմաստասիրութեան, որ զամենայն զիրեանց երկրական տենչանս ի նմա ասաց փոփոխել: Վասն որոյ, թէ և ծայրիւ մատորական մատին միայն առնուլ ի նմանէ համոյ քաղցրութեան: Նուազ և ոչինչ համարել զամժանմունս և զխառնացեալն առնուլ զհեշտութիւն զամենայն ունտես առնել զաշխատանս իւր ի սոյն: Իսկ այժմ ասէ զառաջարկութիւնս, եթէ գործաւորութիւն է ոչ գործ միայն, այլ բազմական դնէ զբանս: Քանզի գործն զմի ինչ առնել նշանակիցէ, իսկ գործաւորութիւնն բազում, որ արդարև բազում գործոց այէտք են իմաստասիրութիւն սկսանել, զոր և հանդերձ Աստուծով ասէ, յոյժ պատուական և գեղեցիկ խոստովանութիւն: Քանզի ոչ այլով իւիք գոյանայ իմաստասիրութիւն, եթէ ոչ Աստուծով, զի թէ Պօղոս Աստուծոյ զնա կոչէ, և այլ ոմն յԱստուծոյ առ մարդիկ իջեալ: Յիրաւի ապա՛ և սա՛ ասէ հանդերձ Աստուծով զառաջարկութիւն գործաւորութեան զի-

մաստասիրութեանս ցուցանել սահման, որ առանց օգնութեանն Աստուծոյ ոչ կարէ գործիլ: Իսկ նովաւ Աստուծով գործասցի. և ունայն ասացեալն զնա՛ հաստահիմն կառուցանի: Բայց որ ասեն թէ պտուղք առաջին, և երկրորդ, և երրորդ, զի՞նչ մեզ յայտնեսցէ իմանի սեռութիւն: Չի թէպէտ և զգործ նշանակէ պտուղքն. ըստ այնմ պտուղք ստորելոց: Բայց և այլ սեռութիւն, քանզի ամենայն, որ գործէ փոխարինին յասովն, որ ի նմա, ուրախ միշտ լինի. որպէս երկրագործն զայտռոյն և անդաստանն, զի նա՛ յօդագային և զնովաւ պահպանիլն յայս առնելեացն: Ըստ այսմ մնաց ասէ յամենայն ճառացն սկիզբն պտղոյ. զգործ աշխատութեանցն որ ի սմա իբր զպտուղ և զփունջ ընդ սրտի և կամ ունկոց, քանզի բոյս սրտի յետ խառնցն և ծորցն պտղակաց զցորեանն ասոր հանէ ի ծայր հասկիցն: Սոյնպէս առնեն և տունկք. ըստ այսմ յամենայն տեղի գործ անուանէ, զի գիտէ յետ զգործ կատարել պտղոյն և ստորոցն արժանանալ, այսինքն՝ քաղցր և համեղ ճաշակմանն, որ յիմաստասիրութենէն, զոր այնքան գիտէ բարեհամ, որ թէև ծայրիւ միայն նովաւ արբենայ, բնաւիցս առնէ քամահումն:

Բան. Որպէս յառաջնումն սեռութեանն խոստացաք:

Լծ. Խոստացաւ յառաջնում բանին դնել վեղծողացն զիմաստասիրութիւն զբանս եղծանողս: Այժմ սկիզբն առնէ նոցին ասացուածոց:

Բան. Էն ի հոմանունաց:

Լծ. Առաջին եղծողական այս Պիհոնի: Քանզի ասեն, թէ էն անուն ամենայն էիցս է անուն՝ իմանալեաց և զգալեաց: Քանզի ոչ գոյ գոյութիւն, որ ոչ անուանի էութիւն: Եւ այսր աղագաւ զէն հոմանուն կարծել և ընդ սովաւ լինել ամենայն գոյիցս. և էս անուն յամենայնի դնի ի վերայ էիցս անուն. և դուք ասէք, թէ իմաստասիրութիւն գիտութիւն էիցս է. և են անգիտելի է: Քանզի ո՛ է կարող զամենայն էքս գիտել: Քանզի ոչ միայն մարդ է՛ և կամ զգալիքս, որք ոչ ընդ գիտութեամբ և կամ ընդ սահմանաւ անկանին. այնք, որ յաղագս գոյելոյն է անուամբ անուանին: Եւ թէ այսպէս է, որ ոչ գիտին ամենայն էքս, քանզի անբաւք և անծայրք են, ապա և ոչ գոյ իմաստասիրութիւն. իբր թէ այսպէս ասելով, թէ ո՞ր իմաստասէր կարաց գիտել զամենայն, որ ինչ է է: Քանզի էս անուն ոչ թողու գոյութիւն, որ ոչ պարփակէ ժամանելով մինչև յիմանալիս՝ նա՛ և յԱստուած: Եւ ըստ ձեզ գիտութիւն էիցս է իմաստասիրութիւն: Եւ յայտնի զոլ է, որ ոչ է կարող մարդ, թէև իմաստասէր, գիտել զԱստուծոյ և զիմանալեացն էութիւն, նա՛ և ոչ զզգալեացս ամենայն. և ցուցու, զի էն անգիտելի է: Եվ թէ այսպէս, ապա և ոչ գոյ իմաստասիրութիւն: Այս եղծողացն առաջին՝ որոց սրտառուհէր ընդդէմ նոցա յայտապէս Բ յեղանակաւ՝ ընդդիմակայութեամբ և ընդդիմայարակա[յ]ութեամբ: Եւ է՛ ընդդիմակայումն այն, որ սկիզբն պատասխանէ եղծանողացն և ոչ չփոթէ զառաջիկայն նոցա ասացուած, այլ զնոցայն բան առնու և նովաւ ցուցանէ[է] նոցին, թէ սոյնպէս է բանս զոր ասէք. բայց զի ոչ բարիոք մեկնէք: Եւ սկսանի ասել, թէ այսպէս ասէ բանդ այդ և ոչ որպէս դուք կարծէք. որպէս և աքարն իսկ. քանզի ասէ, թէ ոչ էն ի հոմանունաց է: Քանզի թէպէտ և ամենայն էութիւնքս է անուանին, այլ ոչ եթէ և այլ անուն ոչ ունին: Քանզի ամենայն որ բնաորեցան յէիցս առանձնակի պատահել անուան՝ որպէս մարդ, որպէս արջառ: Իսկ հոմանուն այնք ասի իրաց, որ թէպէտ գոյութեամբ այլ և այլ լինին, սակայն անուամբ մի, յորմէ կոչի հոմանուն. որպէս երկնային վիշապ, երկրային վիշապ, ծովային վիշապ. ահա՛ այլ և այլ գոյութեամբ և հոմանունք:

Իսկ էս անուն ոչ եթէ վասն հոմանուան ասի ամենայնի և կամ թէ ոչ ունին այլ անուն, զի ամենայն, որ գոյ է նա՛ և է է՛ և ամենայն, որ է՛ է նա՛ և գոյ: Եւ այսորիկ աղագաւ ամենայն գոյի է՛ ասի՛. ոչ իբր հոմանուն, այլ որպէս համագոյ: Որպէս և ասէ իսկ թէ վասն այնորիկ որպէս էս ի վերայ ամենայն իրաց ոչ է՛ հոմանուն, ապա՛ զինչ, այլ որպէս ի միջոջէ և առ մի: Կամ ասէ թէ զի ի միոյ էացան Արարչէ ամենայն էքս: Եւ առ մինն առ նա՛ ցանկան ունել շաղկապութեամբ զէութիւն՝ ասի բնաւիցս է: Եւ կամ զայն, թէ ի մի խառնուածոյ սարերց էացան ամենայն զգալի այս է՛ակքս և առ մինն, այսինքն առ նոյն տարրն ունի՛ շարադրութեամբ ի միմեանս զէութիւնն: Վասն որոյ համէ անուանին ամենայն էքս, այսինքն՝ իբր համագոյ և ոչ իբր հոմանունք: Որպէս ասէ՝ բժշկային գիրք, բժշկային դեղք, ի միջոջէ սկսեալ և առ մինն. որպէս ասել՝ առողջային գիրք, առողջային բանք, առողջային դեղք. ահա՛ առ մինն յանկին: Այսպէս ամենայն մակացութիւն [և] իմաստասիրութիւն ըսկսանին կատարմամբ ի նոյն յանկին, որպէս ի միջոջէ առ մին: Բայց տե՛ս զիմաստնոյս, թէ որպէս ընդդիմակայութեամբ զնոցին բանն յարացոյց նոցին կշտամբիչ՝ այլապէս զնա՛ մեկնելով. իբրու թէ այսպէս ասելով զոր օրինակ ցուցաք, որ ոչ է է՛ ասելս բնաւիցս հոմանուն, այլ յաղագս առ մինն և ի միջոջէն համագոյ: Այսպէս ոչ է ըստ ձեր եղծանելոյդ զիմաստասիրութիւն, այլ է իմաստասիրութիւն ոչ սուտ պատահել անուն, այլ գոյութիւն ունել ստուգաբար: Եւ քանզի որ մինչ ցայս վայր բանք ընդդիմակայինն էր գործ: Իսկ ընդդիմայարակայ այն է, որ ընդդէմ եղծանողացն զիւրն դնէ բան բազում օրինակօք և հաստատէ զիւրն ընդդէմ նոցին: Եւ քանզի դիմակայութեամբն արար, այժմ ընդդիմայարակայութեամբն դնէ բան և ասէ այսպէս. զի թէպէտ ասեմք զէն ի հոմանունաց, բայց

ոչ եթէ վասն այսպէս ասելոյս էն անգիտելի մնա[յ], այլ առաւել այսու իմանի էն յորժամ հոմանուն ասեմք զնա: Բայց ըստ այսմ օրինակի յորժամ զորոշողական արուեստէն բուռն հարկանեմք, որ ստուգաբանէ զհոմանունն, թէ քանի իրք նշանակէ մեկ անուն և ապա՝ թէ զինչ նշանակէ և ապա՝ զնշանակեալն ստորագրել սահմանաւ, որպէս և օրինակ էառ զշունն անուն և էցոյց անտարակոյս. այսպէս պարտ է և ի վերայ էի՝ հոմանուանս դնել զորոշողական արուեստն, քանզի էն զԺ իրս նշանակէ, որ են Ժ ստորոգութիւնքն, զգոյացութիւն, զքանակն և զայլն: Եւ յորժամ ասեմք զէն անուն, ոչ կարեմք գիտել, թէ զորս նշանակէ ի տասանցն: Վասն այնր է՝ պարտ որոշել, թէ զգոյն նշանակէ կամ զքանակ և կամ զայլն: Եւ ի ձեռն զայս քննելոյ և են զաւանոր: Եւ տե՛ս զի ես գիտելի է և ոչ անգիտելի, որպէս դուք ասէք: Այսպէս յաղթէ նոցին: Եւ դարձեալ ընդդիմակայումն է, որ յորժամ կամի ընդդէմ ստոյն բան դնել, նա՝ յսկիզբն ինքն ճշմարտի, զօրաւոր բան դնելով ընդդէմ նոցա: Բայց զառաջակայսն ոչ եղծանէ. առաջակայ զիր բանն ասէ, որ չասէ, ասէ այնպէս, որ ջանայ, թէ զհակառակորդացն եղծանեմ և անիմաստ բանիւն զիրն եղծանէ: Եւ կամ առաջակայ ասէ զնոցա բանն, որ առաջի դրեալ են: Ասէ թէ այն է ընդդիմակայումն, որ թէպէտ և ասէ բան ընդդէմ նոցա ասելոյն կշեռ և ճշմարիտ ի նոյն սկիզբն: Բայց ոչ եղծանէ զնոցայն մինչև ընդդիմայարակային կարողանայ առնել զայս, որ բազում օրինակօք և յարացուցիւ խոստանայ առնել. որպէս և արար: Քանզի էառ ի մէջ զշունն անուն յարացոյց և վասն այնր ասաց ընդդիմայարակ[այ]իւն: Եւ դարձեալ, ասացին թէ են ի հոմանուանց է. ըստ այսմ օրինակի՝, թէ են վասն այնր անգիտելի, զի լոկ անուն է, որ զշատ՝ իրս նշանակէ, որպէս շունն անուն և որպէս կենդանին անուն՝ զցամաքայինն և զծովայինն և զօդայինն կենդանիսն. և կամ որպէս ակն անուն զամենայն ակն՝ զակունսն և զաղբիւրն և զայլն. և կամ որպէս ոսկին անուն զամենայն ազգ ոսկոյ: Սոյնպէս և ես անուն զամենայն իրս նշանակէ և ինքն անգիտելի է, զի չէ իրք ի հոմանուանց միայն, որոյ ընդդիմակայէ կարծ բան և ազդու իսկ զբան, և ճշմարտէ այսպէս. թէ էն ոչ միայն ի հոմանուանց է, այլ որպէս ի միջէն և առ մին, զի որպէս բժշկութիւնն գիտելով զբժիշկն գիտացեր, և յորժամ բժիշկն գիտացեր զբժկութիւնն: Սոյնպէս և յորժամ զայն իրքն գիտացեր, որ իր է, մարթի ասել՝ դու նոյն զէն գիտացեր: Եւ այդ, վասնզի ասացին, թէ են ի հոմանուանց է, ասէ, թէ ոչ է են ի հոմանուանց, այլ որպէս ի մեկ էացան Արարչէ ամենայն էքս և առ մին ցանկան զնախախնամիլն:

Բան. Է՛ ասեմք սոցա:

[Լծ.] Բան* ընդդիմակայումն է այլ օրինակաւ, որ զայն բանն դնէ եղծողացն կշեռ, որ ամենևին անյար լինի և հակառակ. զի ասացին թէ են ի հոմանուանց է. սա ասէ թէ ոչ է են ի հոմանուանց. և այս բնաւին է հակառակ: Իսկ դիմայարակայումն այն է, որ թէպէտ և է՛ հակառակ և զօրաւոր ի յեղծանելն, բայց ի յար և նման լինի նոցին ասացեալն և այս է սքանչելի, որ յիւրեանց ասելն ի յար լինի և ազդող ի յընկճելն. քանզի ասացին, թէ էն ի հոմանուանց է: Սա ասէ թէպէտ և է՝ էն ի հոմանուանց, զոր դուք պատճառ ասէք ոչ գիտելոյ, բայց ես առաւել այս է պատճառ զնա՛ գիտելոյ: Զի զորս նշանակէ և ստորագրէ, նովաւ և զէն իմանամք, այսպէս ասեմք է՝ և որոշեմք զինչ է է՛, ասեմք գոյ և որոշեմք զինչ գոյ՝ ասեմք կենդանի և ասեմք ստորագրեալ, և ասեմք՝ բ[ա]նական, մահկանացու: Ահա մարդ, և աստի զէն իմանամք և գիտենամք: Սոյնպէս և յորժամ զայլն: Բայց ոչ եթէ յորժամ է ասեմք իրաց զինչ և իցէ, եթէ այլ անուն ոչ ասեմք: Զի մարդն է է. բայց մարդ ասեմք. և հրեշտակն է է՛, բայց հրեշտակ: Նոյնպէս և ամենայն իրաց այլ անուն գոյ: Այլ սա հոմանուն է ամենի: Վասն որոյ ի միոյ էացան յէէ՝ յԱստուծոյ: Այսպէս եղեծեաց զնոսա քաջս Դաւիթ:

[Բան.] Իսկ երկրորդ գլուխ եղծանողաց իմաստասիրութիւն, եթէ էակքն ի հոսման և ի ծորման են:

Լծ. Զտարերացս ասէ, որ դիւրաւ կու փոխին յայլ և յայլ ժամանակս՝ ի զալուն և յամառն և յայլքն. և կամ զփոփխիլն զաւին ի գիշերն. և կամ զկենդանեացն մահ և զտնկոցն նուաղումն, որ յաշունն: Որոց սրաստախօսէ, թէ իմաստասիրութիւնն զընթանայքն գիտէ, որ են չորք տարրն և այն անփոփոխք են և անծախք: Նոյնպէս և թէպէտ ապականին ազգ կենդանեացն և տնկոցն, բայց սեռն ոչ նուազէ և թէպէտ յայլ և այլ փոխի օդն, բայց ոչ ապականի:

Բան. Եւ այլ ազգ ասեն:

Լծ. Այսպէս ասեն, թէ պարտ է անձին, որ զինչ և կամենայ գիտել, նայ որպէս զայն իրքն լինել՝ թէ ջուր և զանասուն և զամենայն իրս. և յայտ է, ասեն, թէ հոգին ոչ փոփոխի ի գիտելին: Նոյնպէս և ոչ գիտելիքն ի յանձն: Ահա՛ յայտ է, թէ ոչ գոյ իմաստասիրութիւն: Զորս յմբերանէ՝ զԱստուած առեալ օրինակ և զբժիշկս՝ իբր թէ ասելով, թէ ըստ ձեզ ասյա և ոչ Աստուած գիտէ իրս ինչ ի յէիցս: Վասն զի Աստուած անփոփոխելի է բնութեամբ, բայց զամենայն գիտէ անմոլար: Նոյնպէս և բժիշկն ինքն առողջ կայ և գիտէ ընդդէմ և գիտել զհիւանդս

* Թվում է «բան» բառի փոխարեն պետք է լիներ՝ Լծ.:

և ինքն ոչ հիւանդանայ: Նոյնպէս և անձն իմաստնանայ ի բնաւից գիտութեան առանց ի նոսա փոխելոյ: Երկրորդ գլուխ ձեռնարկութիւն եղծանողացն զիմաստասիրութիւն:

Բան. Եթէ ամենայն գիտելիքն ընդ գիտութեամբ սահմանականին ըստ Պղատոնի:

Լծ. Այսպէս է ասելն նոցա. թէպէտ և է՛ իմաստասիրութիւն որպէս ասէ՝ և ոչ ուրանամք: Տե՛ս, զի իմաստասիրութիւնն յերկուս բաժանի ըստ ձեզ. ի տեսականութիւնն և ի գործականութիւնն: Եւ թէ զտեսականին մասունսն եղծեմք՝ յայտ է, թէ ոչ գոյ իմաստասիրութիւն. և ասեն, թէ Պղատոն զուսումնականսն ոչ ասէ մասն իմաստասիրութեան. որպէս և գրեալ էր ի վերայ սեմոցն զայս ինչ: Նոյնպէս և զբնաբանականսն եղծաք յայնտեղ, որ ասացաք, թէ էակքն ի հոսման են: Եւ զաստուածաբանականսն, թէ Աստուած իբրայովքն ընդ զգայութեամբ ոչ անկանին. և այս է ցուցիչ, որ չգոյ իմաստասիրութիւն: Որոց պատասխանէ կարի վայելուչ. թէ և իմաստասիրութիւնն և ի գործականութիւն բաժանի և յորժամ զնա ոչ կարացիք եղծանել, յայտ է, թէ և գոյ իմաստասիրութիւն: Նա և Պղատոն զուսումնականսն, յորժամ ընդ աստուածաբանականսն համեմատեաց, ասաց, որ չէ նմա այլ պիտոյ ըստ այսմ օրինակի: Յորժամ իմաստասէրն յաստուածաբանականսն ժամանէ, չէ այլ կարօտ երկրաչափականին և այլոցն, որ ուսումնականաց գոյանայ: Որպէս թէ ոք սանդղօք ի վերնատունն ելանէ, այլ չէ կարօտ սանդղոցն. ապա թէ ոչ՝ չէր ասացեալ և մակագրեալ, թէ «Աներկրաչափ մի ներստմտեսցէ»: Որոյ և վկայ զԱրիստոտէլ առնու և բնաբանականին եղծման ի յայնմ տեղւոջ սպառ, որ ասաց, թէ ոչ ծորեցելոցն էակացն է գիտօղ իմաստասէրն, այլ հանուրցն, որ անծորք են: Եւ զաստուածաբանականսն ասէ, թէպէտ և այդպէս է, որ չանկանին ընդ զգայութեամբ, բայց արարածովք բարձրանամք առ նոյ. և նոյնպէս կարկեաց զնոսին:

Չորրորդ ձեռնարկութիւն եղծանողացն՝ զիմաստասիրութիւն կամ գիտութիւն կամ ոչ գիտութիւն: Եւ թէ ոչ է գիտութիւն, նա յայտ է, թէ ամենևին ոչ գիտութիւն է և ոչ ունի գոյութիւն. ապա թէ գիտութիւն է, ասեն, նա կամ մէկ իրք միայն կարէ գիտել՝ կամ զմասն, կամ զանասուն: Եւ այսու յայտ է, որ վասն երևի* բան զզգայականութիւնն և զճարտարարութիւնն, որ է մասն բանականութեանն, զի զբէ անմոլար քերականն վասն ամէն իրաց՝ թէ այս ինչ մարդ է և այս ինչ թռչուն, և այս ինչ լոյսակ: Նոյնպէս և ճարտասանն ասէ վասն ամենայն զոյիցս բան անմոլար: Բայց թէ սա զմի միայն իրս գիտէ, յեաին է, քան զայլս յարհեստից, և սոէք յաւելն մակացութիւն զնա և մակացութեանց, և արհեստ արհեստից, զի չէ և ոչ ունի էութիւն: Բայց թէ ընդհանուր է գիտութիւն. ոչ կարէ ընդհանուր գիտութիւնն ի մի ընթակայումն գոյանալ. այսինքն՝ ի մի մարդն՝ ի Պղատոն կամ ի Սոկրատէս. է՞ր վասն: Զի ընդհանուր պատահումն է, այսինքն՝ գոյն, և չկարէ ոք զընդհանուր գոյնս գիտել, թէ ոչ իբրև զա[յ]ն գոյնս լինի. զոր կամի գիտել՝ սև, կամ սպիտակ, կամ կարմիր. և այս անհնար է, զի թէ գոյնքն ի մի տեղ ժողովին, շփոթեն զմիմեանս. և ասեն ոչ մի սև և սպիտակն առնեն զայս, որ հակառակ են միմեանց, այլ ահա սպիտակն, որ ազգ են իրաց, չկարեն ի մի ընթակայումն ժողովել, այսինքն՝ ի մի նիւթ ձեան: Զի թէ ժողովին ի կարն կամ այլ սպիտակ իրն**, խափանեն լինել այս: Նոյնպէս և իմաստասիրութիւնն, թէ ի մարդն բաղկանայ, մէկ այլ մարդն չկարէ գոյանալ. և աստուստ է յայտ, թէ [ոչ] գոյ իմաստասիրութիւն: Զայս եղծօղքն: Որոց պատասխանէ ասելով, թէ այոյ, իմաստասիրութիւնն ընդհանուր գիտութիւն է, բայց չէ՛ այդպէս. որպէս դուք ասէք: Ընդհանուր գոյնքն այլ իրք է, այսինքն՝ պատահումն զընդհանուրսն գիտել, այլ իրք՝ զգոյնն մարմինն ընդունի և կամ չընդունի: Իսկ զգիտութիւնն միտքն է: Եւ միտքն չունի կարիք ի գոյն շրջել և ապա գիտենալ զսպիտակն և կամ զսևն: Նոյնպէս և չունի կարիք ի յէութիւն կամ ի կերպարան յեղլ և ապա՛ գիտել, այլ առանց նոյնպէս լինելոյ գիտէ զամենայն էքս և զգոյնքս՝ Արիստոտէլ ի միտքն: Որպէս և Աստուած գիտէ զամենայն էքս առանց փոփոխելոյ ի նոսա: Եւ բժիշկն անհիւանդ լինելով, գիտէ ցաւոցն դեղ առնել: Եւ մի՛ այնպէս կարծես. թէ երբ մարմինն Պղատոնի կամ Սոկրատայ չկարէ զամենայն գոյնքն ի միում ժամանակի ընդունել. նա նոյնպէս և ոչ միտքն չկարէ զբնաւիցն էութիւնն գիտել. մարմինն չկարէ մէկ ժամ զսպիտակ գոյնն, և զսևն, և զայլքն ընդունել, որ չշփոթեն մի զմի. և կամ կարեն ամէն մէկ զիրեանց սեռն ցուցանել, զի մէկն զմէկն ապիրէ. յորժամ ի մին մասն լինի և ի մի ժամ, ապա յայլ և յայլ ժամանակ լինի ի մէկ մարմինն, յորժամ զսևն լուանայ և կարմրացնէ, և զայն լուանայ և դեղնացանէ: Բայց ի յերկու մարմին ի մէկ ժամ կարէ սևն և սպիտակն սեռնաբար երևիլ և անշփոթ. բայց այս մարմնոյ է, որ չկարէ ընդունել զզունելն ի մէկ ժամ, բայց միտքն կարէր ի նոյն ժամանակ զամենայն իրաց գիտել սեռնաբար, զի գիտէ, թէ սպիտակն գոյն է դատիչ աչացն, այսինքն՝ տանջիչ, և սևն ազգակից է աչացն: Նոյնպէս և ամենայն իմաստասէր իբրև զՍոկրատ: Այսպէս կարկեաց զեղծողացն զհակառակութիւն, բայց ասէ, թէ կատարեալ այն է փորձապէտ, որ և զիրն հաստատէ: Եւ ասէ, թէ արդարև գոյ իմաստասիրութիւն, զի թէ կայ Աստուած, կայ և ի-

* Ձեռագրում՝ էր և ի:

** Ձեռագրում՝ էրն:

մաստասիրութիւն: Վասն զի Աստուած իմաստութեամբ նախախնամէ: Նոյնպէս ոչ նախախնամէ զմարդն իբրև զանասուն, և ոչ զբոյս՝ որպէս զքար, այլ զամէն մէկ ի յիւրն: Այս է իմաստութեամբ նախախնամելն: Եւ այս է իւրն, զոր հաստատեաց ընդդիմակայութեամբ, որ զնոցայն կործանեաց և ընդդիմայարակայութեամբ, որ զիւրն հաստատեաց օրինակաւ:

Ընդ որս հանդերձ Աստուծով:

Բան. Թէպէտ օրինակաւ:

Լծ. Այսինքն՝ զի ստոյգ էութիւն ունէր և չէր կարիս ցուցանելոյ, բայց զճշմարտութիւնն կռուակից մեզ առաջ և զհակառակդն տկար ցուցաք զիմաստասիրութիւնն ձեռն, այսինքն՝ օրինակաւ, զի զամենայն օրինակս իմաստասիրութեան ծնանի:

Բան. Առ որս հանդերձ:

Լծ. Զայս ախտացեալ ասեն՝ ոչ գոյ հասումն իմաստութեան: Որոց ասէ Պղատոն, թէ հասէք, ապա գոյ իմաստութիւն, և թէ ոչ հասէք, տգէտ էք, որ ոչ հաւատայ ձեզ:

Բան. Արդ ի բաց թողեալ զեթէ են:

Լծ. Վասն զի գոյութիւն ունի կատարեալ իմաստասիրութիւն, ապա այսուր է զինչեն, թէ որպէս է՝ որպէս բոլոր իբրև մարմնոյ մարմինն և որպէս մասունս, զինչ՝ մասնոյ մասունս: Եւ պարտ է գիտել, թէ զի՞նչ է սահման և զինչ բազմութիւն: Սահման պղով իրս մի առնէ և որոշութիւն զմինն ի յոլովս և սահմանն միակի է օրինակ և որոշութիւն բազմութեանն: Եւ այսր աղագաւ նախ է միակն քան զբազմութիւնն: Բայց այսուր է գիտել զիրացն հետևանքն և ապա յաղագս իւր բան հիւսել: Զի թէ ոչ գիտէ, թէ հիւանդին բժշկելն է բժշկին հետևանքն բնաւորեալ, զինչ և ասէ ասկս նոյա՝ ասէ: Նոյնպէս այսուրի գեղեցկագոյն վասն ամենայն իրաց խորհել և գիտել ի սկզբանն, թէ վասն որոյ կայ խօսիմ. և ապա ողջակի խօսի: Վասն զի իրոյ հետևանք է յաւասարելն, և ջրոյ՝ զովացուցանելն, երկրի՝ բուսուցանելն, մարդոյ՝ մսկացանելն, և սահմանին՝ զէութիւն իրացն ցուցանելն և միացուցանելն: Իսկ որոշողութեանն հետևանք է զմինն ի բազում արկանել: Որպէս և ի մէջ առնու զիրոյ զօրութիւնն օրինակ: Քանզի զիւրէ բաժանողական արհեստն բաժանել զգոյն՝ ի մարմին և յանմարմին, և զանմարմինն՝ յԱստուած և ի հրեշտակս, իսկ զմարմինն՝ ի կենդանի և յանկենդան, և զանկենդանն՝ ի ներբնական և յանբնական, և զներբնականն՝ ի բոյս և ի տունկս, և զտունկսն՝ ի սեռս, այսինքն՝ յընկոյզ և ի նշի, և զնշին՝ յանհատսն: Իսկ զանբնականս՝ ի քար և յերկաթ, յոսկի և յարծաթ: Իսկ զկենդանին՝ ի բանական և յանբան, և զանբանն՝ ի ցամաքային, և յօդային, և ի ծովային: Իսկ զբանականն՝ յանմահ և ի մահկանացու, և զմահկանացուն՝ ի տեսակս, և զտեսակսն՝ յանհատսն՝ ի Սոկրատ, ի Պղատոն և յայլսն: Ընդ որս հանդերձ:

Թէ զինչ է սահման: Է այս ինչ. ամենայն բան, որ լինի կարճ և յայտնէ զբնութիւն իրաց, այն է սահման: Այլ ասէ, թէ յամենայն սահմանն կայ բան, որ ի սեռի տեղ է և կայ, որ բաղկացուցիչ զանազանութիւն է, որպէս և ի մարդոյն սահմանն կենդանին սեռ է: Նոյնպէս և ի սահմանի սահմանս բանն ի տեղի սեռի է, և այլքն՝ ի բաղկացուցիչ զանազանութեան: Բայց և անունն զիւրէ առնել սահման որպէս և սահմանն, քանզի յորժամ ասես մարդ՝ սահմանէ առանց սահմանի: Նոյնպէս և ի սահմանի սահմանս զիւրէ բանն զանուան տեղի լինել և զսեռի. զի զոր ինչ առնէ մարդն անունն՝ ի մարդոյն սահմանին: Նոյնպէս առնէ և բանն ի սահմանի սահմանս և լինի բանս զսեռի տեղի, որպէս կենդանին՝ անդ: Եւ ծանեաք, եթէ բանն եղեց զանուան տեղի և զսեռի ի սահմանի սահմանս: Եւ համառօտ վասն այնր ասացաւ, զի բաղկացուցանէ, այսինքն՝ յայլոց բանից ի յերկայնագունից ի ներտրամագանէն, որ ի միտք և որ ի դուրս բերի լեզուաւ և յայլ և յայլ պատմութիւնն, և որ վասն պասկելոյ զոր վասն քաջութեան, որպէս զՈլոմպիադորոս: Եւ յայտնիչ բնութեան ընթակայ իրին վասն այնորիկ ասացաւ, զի շատ բան կայ կարճ, որ չյայտնէ իրաց բնութիւն, որպէս բացագանչման, զի նա բան չէ, միայն ձայն և ոչ յայտնէ իրք: Եւ «Ծանիրն զքեզ» կարճ է, բայց և ոչ նա յայտնէ*: Նոյնպէս և «Մի՛ ինչ յոյժն», զի ասեն երիտասարդ ոմն տռփել կնոջ, ցանկայր տեսանել: Վասն որոյ յոյժ վազէր ի տանիսն, յորում նստեալ կինն: Եւ ի շարժմանէ սանեացն յետս հայել կնոջն, ասա՛ց երիտասարդին, թէ մի՛ հալածեանս. զի ոչ դու՛, այլ սանդուղքն շարժեցին զիս: Այլ ասեն, թէ յառուրս Պիթագորա[յ] երիտասարդ ոմն շատ ինչ խօսէր և անհամս: Սաստեաց Պիթագոր՝ Զի՞րդ անչափ խօսիս անկարգ բերանով, ոչ ումեք յօգուտ իբրև զձայն բացագանչման: «Ծանիր զքեզ, մի ինչ յոյժ» վասն այնր ասէ բան, որ լինի կարճ՝ զատեալ ի բազում բանից և լինի զբնութիւն իրաց յայտնող: Զատ ի յայլ կարճ բանից է սահման: Եւ կամ վասն այնր ասացաւ յայտնիչ բնութեան իրին, զի այլ կա՛ բան, որ զպարագայսն յայտնէ և զպատահումն մարդոյն: Բայց այն ստորագրական ասի սահման: Եւ պարտ է գիտել, թէ այլ է սահման և այլ ստորագրական սահմանն: Սահման զգոյութիւն և զբնութիւն իրացն յայտնէ և ստորագրական սահմանն՝ զպարագայսն և զգոյնն: Վասն որոյ չեն մի, այլ՝ այլ և այլք:

* Ձեռագրում՝ չյայտնէ: Ակնհայտ սխալ է:

Եւ այն է գոյացողականն, որ յորժամ առնէր լինի գոյացուցանէ և յորժամ ոչ՝ ապականէ, որ է քանականն: Թէ բան առնէր լինի դեռևս չէ մեռեալ մարդն: Իսկ ստորադասականն լինի մեծ և մարդ մեռեալ: Որպէս գոյն լինի առ մարմն և նա՛ ոչ գոյացուցանէ և ոչ ապականէ: Բայց պարտ է գիտել, թէ այլ է սահման և այլ սահմանադրութիւն: Այսինքն՝ սահմանն զբնութիւնն յայտնէ, և սահմանադրութիւն՝ զքաղաք, և զգետ. և զագարակ, զանդ և զսինոր: Վասն այսր սահմանադրութիւնն սահմանէ և սահմանադրութիւն նշանակ[է] և զայն, որ յայս վերածանի առաջարկութիւնն, որ է այսպէս. ամենայն որ ասի առաջք և վերջն, ի նոյն յանգի, զի լինի, որ թէ զվերջ բանն դնես առաջք, զմի իրս ասէ, որպէս Սոկրատէս ճեմի. և դարձոյ զբանն, թէ ճեմի Սոկրատէս, զմի իրս ասէ: Եւ ասէ, թէ սահմանադրութիւն է, զի յառաջարկեալ բանն ի վերջն յանգեցաւ: Բայց ասեն ոմանք, թէ յետին արարէք սահմանի սահման, այսինքն՝ թէ սահմանեցէք զսահման. սոյն և զայն սահմանեցէք, և թէ առնէք յանբաւն երթա՛ և ոչընչանայ սահմանն: Եւ այլք ասեն, թէ որպէս սահմանելի սահմանեցէք զսահմանն, այսինքն՝ ընթակայ, ապա սոյնս է և զայն սահմանել սահմանն, որ սահմանեաց զսահման: Առ որս պատասխանեսցուք, թէ մեք սահմանեմք զսահմանի սահմանն, բայց սահմանեմք ի ձեզ, որ զնա դուք սահմանէք. և այս յանբաւն երթայ: Այսպէս սահման զայլս սահմանելով, զինքն սահմանէ, ըստ օրինակի թուոյ, զի քանակն շինելով զինքն, շինէ Ժ թիւն, զի Բ Ժ է քանակն: Եւ յորժամ ասեն, թէ ընդէ՞ր ի ստորադասական սահմանն, զյոգն նախադասեն: Եւ այլք ասեն, թէ Հոմերոս արար զայդ կիս իշխն օրինակս: Հիանալ ասէ զայս պատասխանի և ինքն ցուցանէ այնպէս, թէ առաջինքն յայտնին փոյթ ոչ արարին և թէ չէ շփոթումն իրացն թէպէտ հոյնն յասել. թէպէտ ասել՝ «Ճեմի Սոկրատէս» և թէպէտ «Սոկրատէս ճեմի» կամ ասել «Տուր ջուր լմեմ» և կամ՝ «Ջուր տուր, որ խմեմ»: Որպէս առաջինքն փախեան յառաւել և նուազ ստացութենէ և կամեցան ամէն մեկի յիւր ազգակիցն փայելել: Անէ սահմանն զայս, զի առայ յամէն գոյիցս յիւրն փայելել՝ զասելով ի միասին. մարդոյն՝ յիւրն, անասնոյն՝ յիւրն. և այս ի կարգն: Ենթակայ է, որ ըստ բնութեանն և ազդէ այսպէս՝ փայտն ազդէ միշտ զփայտ լինել և յորժամ գործի. կամ աթոռ և կամ ափոր և արհեստ, որպէս ասատղաքաշխն ազդէ զնրկնա-յին մարմնոյն զգիտութիւնն: Կատարեալ իմաստասէրն անհասին ազդարար ոչ ցանկայ, այլ յորժամ զիտենա[յ], թէ անհաս է, դադարէ. զի և այս իմաստասիրութիւն է, և ոչ է իբրև զանկոպապահանջ անմիտ արքն, որ խնդրեն ասկոսս ընչիցն, այսինքն՝ փաշխ և փաշխին այլ փաշխ. և այս անլից է փափագ նոցա և փաշխին բնութիւն: Բայց իմաստասէրն յանհասն, իբրև արդարև խելօք, դէ ցանկութենէն: Բայց բնութեցաւ ամենայն սահման ի սեռէ [և] ի բաղկացուցիչ զանազանութենէ լի-նել: Ապա է՞ր վասն յենթակայէ և ի կատարմանէ առէք: Եւ պատասխանեն այլք նոցա և ոչ մե՛ք, թէ բնականսն լինի այդպիսի սահման, իսկ յարհեստն ոչ այդպէս: Բայց կամի դարձուցանել, թէ գոյ և յարհեստիցն սահման սեռ և բաղկացուցիչ զանազանութիւն, և գոյ ի բնականս ընթակայ և կատարումն: Ճարտասանութիւնն զհաւէ հաւանական առնել ի ձեռն արհեստին զասացեալն՝ թէ սուտ և թէ ճշմարիտ, իսկ իմաստասէրն հաւանեցուցանէ, բայց ոչ սուտ, զի իրաւ խօսի:

[Բան. Են ոմանք, որ ենթակայացեալք գոն և ոչ անուանեալք, որպէս այնոքիկ, որք ի խորս գոն]*:

[Լծ.] Են, ասէ ի խորս, այսինքն՝ ի ծովն և ի սիրտ երկրի և կամ ի ներքոյ երկրիս շատ իրաց, որ ոչ տեսանէ ի մարդկանէ և ոչ անուանեցան, և այլք գոն, որ անուանեցան և ոչ են էութիւն, որպէս յարալեզն: Իսկ իմաստասիրութիւնն յայնցանէ է, որ էացեալ է և անուանեալ: Ի միոյ գծէ երկրաչափին սկսանի, բայց ինքն չգիտէ, թէ գիծն էր է անմասն: Եւ իմաստասէրն գիտէ, զի մայր է ամենայն արհեստից: Երաժշտական իմաստասէր ոչ ասէ զերգեցողն, այլ զիմաստասէրն, զի կատարեալ երաժիշտ բանի բուն երաժիշտն է և ոչ որ ձայնիւն է գիտակ: Զի երաժշտն բնականաւ գոյանայ, որպէս լալականութիւնն ի մրմունջն և զերգն հոգևոր:

[Բան. Ի թուոցն ոմանք կատարեալք գոն, և ոմանք՝ անկատարք, և ոմանք՝ գերակատարք]**:

[Լծ]: Զ թիւն վասն այն[ր] է կատարեալ, որ իւր մասունքն զինքն կատարեն, որ է այսպէս՝ Զն Բ Գ և Գ Բ և Զ Ա Ա և այլ ցեղ [չ]կարէ վեցն բաժանիլ՝ է՞ր վասն, զի ի չափ պիտի բաժանեալքն և վեցն ընդ չորս կամ ընդ Ե չլինի, զի Դն Զին*** մէկուկէս մէկուկէսն: Եւ թուական արհեստ չհամարձակի զմիակն բաժանել:

Ամենայն իրք, որ հասարակ է, նախադասի այնմ, որ առանձինն, որ[պէս] կենդանին յառաջ է քան զմարդն, և մարդն՝ քան զմահկանացուն, և մարդն՝ քան զբանականն՝ յետ****: Այսպէս չորք սահման իմաստասիրութեանն յառաջ են, քան զայն, որ յարաւելութենէ ասէ, այսինքն՝ յառաւելութենէ, զի նա միայն իմաստասիրութիւնն յարէ և ոչ այլ ումեք, զի արհեստ

* Ավելացված է ըստ բնագրի:

** Ավելացված է ըստ բնագրի:

*** Կարծում եմ ակնհայտ սխալ է, պետք է լինի՝ Զն և Դին:

**** Ըստ բնագրի պետք է լինի՝ զբանականն և բանականն՝ քան զմահկանացուն, յետոյ:

արհեստից և մակացութիւն մակացութեանց նա միայնիւ ոչ այլօք արհեստ աստուածայնոց և մարդկայ[ի]նոց իրողութեանց. ոչ զայն ասէ, թէ զբնութիւնն Աստուծոյ կարէ գիտել, այլ զքաղցրութեամբ նախախնամութիւնն առ իւրս արարած յետ առնելոյ զոսա: Բայց զմարդկան բնութիւն կարէ գիտել, թէ ուստի է և ծագոյն լինի հասու, թէ անմահ է և փափագող բարոյ: Եւ տե՛ս, թէ որպէս Պղատոն ուսուցանէ, որ ուղղորդաբար մեծ են յիմաստասիրութիւնն, չխնկան այլ ինչ, քան զախտսն մեռուցանել, որ ավելորդ է բնութեանն և եկամուտ: Եւ առ այլ ումն ասէ, թէ որովհետև ոչ գոյ կարօղութիւն ի բաց բառնալ զչարն, որ են ախտքն, զի հարկ է լինել չարին, որպէսզի բարին երևի և որպէս չեմք կարող մարմնով ելանել յերկինս, փախիցուք զվաղագոյնն, որ է ախտիցն առնել մեռելութիւն: Եւ ինձ թուի, որ թէ իմաստասէրքն ոչ ունէին զայս յայտութեան, զայս ոչ ասէին: Եւ նման լինելն Աստուծոյ այն է, որ ընդունի արդարութիւնն մնա և բարեպաշտ կայ, խոհեմ և արի, և ողջախոհ, զի զայս Աստուած եդ ի ստեղծմանն ի մեզ նմանութիւն: Եւ ծանի՛ր, որքան և ջանայ մարդ յիմաստասիրութիւն, չկարէ յայն ելանել, յոր ունէր նախ քան զմեղանչելն: Վասնզի օտարացաք ի բնականէն:

[Բան]. Իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակքն են:

[Լծ]. Բայց պարտ է գիտել, թէ իմաստասիրութիւն ի սահմանումն զգիտութիւն ի տեղի սեռի դնէ և զայլ բառսն ի բաղկացուցիչ զանազանութեանց: Եւ զնոյն գիր վասն այնորիկ յաւելու յէակսն, զի տարացոյց սա զնախապէտն լինելոյ. քանզի յորժամ ասեմք՝ «Այր եկն» զանգիտէ ասեմք, իսկ եթէ ասեմք՝ «Այրն եկն», ցուցանէ զգիտելոյ իրսի: Եւ յորժամ ասէ՝ իմաստասիրութիւնն գիտութիւն է աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց՝ զգիտելն ի սեռի դնէ տեղի և զայլ բառսն ի բաղկացուցիչ զանազանութեանց. այսպէս և զայլն ի կարգին իմա զսահմաններս իմաստասիրութեանն:

Մեռանել զայն ասէ, որ զգործնականն յարդարէ. և մեռանիլ՝ որ զտեսականն, քանզի մայր իմաստութեանն առաքինութիւն է: Պոիմիական սպատերազմն զԵլիոն քաղաքին ասէ: Պղատոն ասէ զկամաւոր մահուանէն: Ասէ և ոչ որպէս Կլէոմպրոտոս, որ զբնաւորական մահուանէն իմացեալ մեռաւ: Երեխան ասէ, զի որպէս նաւեալքն ի սեղան և ըստ բազմաձիմի ի-բաց հարկ եղեալ յառնել ի սեղանոյն: Սոյնպէս առնեն ստոյիկեանքն, թէ պարտ է յառնել կամաւ ի կենաց ստասի և մտանել ի մահ:

[Բան]. Պղատոն և Փայխոյն:

[Լծ]. Պղատոնն զերեզման ասի, կամ դժոխք և Փայխոնն՝ արեգակն, զի յերկուցն էր զրկեալ, զի կէս մարմնոյն առողջ և կէսն զօս, ոչ առողջ մարմնով յարեգակն էր և ոչ զօս մարմնով ի դժոխս: Դարձեալ ասեն, թէ ոչ զՊղատոնի մահն մեռեալ, որ ասաց խոկումն մահու և ոչ Փայգիտոն բժիշկն կարէր բժշկել, յայտ է, թէ յերկուցն էր զրկեալ: Տե՛ս, զի ոչ միայն զորական ասէ նման միմեանց, այլ և զջերմութիւնսն: Որպէս զպղպեղին, որ այլ և այլ են որակութեամբ: Առ Աստուած բարին և գիտելն և կարելն բնութեամբ են, որպէս լոյս յարեգական, իսկ մարդն որպէս յօդոյ ընդունականութեամբ, զի երբեմն բարի լինի և երբեմն չար ընդունի. և գիտելն ոչ է որպէս Աստուածոյ, զի յորժամ ծնանի մարդն, չգիտէ ազդմամբ, այսինքն՝ ուսմամբ, այլ գիտէ զօրութեամբ, այսինքն՝ կա ի բնութիւնն իւր զօրութիւն գիտելոյ: Այլ զի մարդն չէ իբրև զնաւասատն, որ զիրսն, զինչ ունի զայն բնութեամբ, այլ ուսմամբ: Վասն այնր ի սոյսոյականն ոչ գիտէ, բայց երբ ուսանի, գիտէ: Սոյնպէս և կարելն այսպէս է առ Աստուած և այլ առ իմաստասէրն: Եւ ասէ՝ իմաստասէրն զբնութիւն գոյիցս գիտէ: Իսկ զհետևանքն բնութեանս առնէ ապաստան ի յայլ արհեստաւորքն: Քանզի առնուն զնիւթ և զտեսակ և զկըզբունս: Առնու զնիւթ այսպէս. թէ չէր նիւթ և յառաջ նիւթ գոյացեալ յԱստուծոյ և տեսակացեալ, զի չէ հնար, թէ առանց նիւթոյ տեսակ գոյանայ: Այսպէս և հարկ է, որ յորժամ նիւթ եղև, նա ունենայ և տեսակ: Իսկ յետ տեսակին ասաց՝ սկսաւ Արարիչն կատարել զԴ տարերս: Եւ այս է գիտել զիմաստասիրութիւն և ի նոցանէ ասէ, թէ եղեն նմանամասն, այսինքն՝ էից ծայրից ընդ իրեարս կցորդեալն. և ի նոցանէ զգործիականսն. և է գործիականսն, այսինքն՝ զի նոցա տարերցն խառնելն և նմանամասնիցն եղև պատճառ և գործի մարդոյ մարմնոյ և ամենայն էիցս: Եւ քերթողն գիտէ և զհետևմունս ձայնից, բայց զբնութիւնս ձայնիցն գիտէ կատարեալ իմաստասէրն, զի քերականն ոչ միայն գիտէ գրել, այլև զձայնս գիտել: Եւ դարձեալ իմաստասէրն գիտէ զբնութիւն երկրի, զոր գիծ ասէ, իսկ զչափ նորա թողու երկրաչափին: Եւ դարձեալ ճարտասանն մասն է իմաստասիրութեանն: Բայց չունի ապացուցութեանն փոյթ, այլ միայն հաւանեցուցանելոյ՝ թէ առա և թէ իրաւ: Բայց իմաստասէրն յամենայնի իրաւ. և նա զքաղաքականն հաստատեալ կրատոնս: Քանզի միաբանաբար ասացեալքն ոչ ասին առանձնաբար, որպէս օրինակս ցուցանէ, և որպէս ասացեալն ասէ [թէ մարդ և]* ոչ մարդ: Կուրտն էսպան թեթև քարիւ, որ է ծովու լեթիր և չղջիկանն: Իսկ առաւելութիւն այն է, որ առ, այսինքն՝ թէ ամենայն որ քան զմիւսն առաւել է, մեծ է, քան զնա: Սոյնպէս իմաստասիրութիւնն քան զամենայն արհեստ և մակացութիւն, զի նոցա սկզբունս ի նմանէ է՛:

* Ավելացրել ենք ըստ քննական բնագրի:

**Բան.** Արդ պարտ է գիտել, թէ գիտութիւն:

**Լծ.** Սոյնպէս թէ պարտ է գիտել զգիտութիւն, թէ ուստի է և կամ զինչ առնու իւր սկիզբն: Եւ ասէ գիտութիւն է, որ զընթանալոյն գիտէ՝ և է, որ մասն մի, և է, որ գիտէ և ոչ զպատճառն, և է, որ գիտէ. բայց և զպատճառն՝ հմտութիւն, և ներհմտութիւն, և արհեստ, և մակացութիւն: Այս չորքս գիտութիւն ասի, բայց այլ և այլ է սոցա օրինակն: Եւ հմտութիւն ասէ, թէ այն գիտութիւն է, որ զմէկ իրք գիտէ. բայց չգիտէ զպատճառն, և է այս աստեղագէտն, բայց ոչ գիտէ, թէ էր կու շրջի հանապազ երկինքն, թէ որպէս և զաստեղացն շարժիլն գիտէ: Որպէս մէկ մի գիտէ, թէ այս նիշանակ այս ցաւոս դեղ է և է սայոյց. բայց չգիտէ, թէ է՞ր վասն: Այս է հմտութիւնն: Իսկ ներհմտութիւն է ընթանալոր իրաց գիտութիւն, այսինքն՝ անպատճառ, որ չգիտէ զպատճառն: Թէ լինի մէկ մի աստեղագէտ, և երկրաչափ, և երաժիշտ, և համարող, բայց չգիտէ, թէ է՞ր է անկայուն երկինք, կամ է՞ր է գիծն անմասն, կամ է՞ր է էն և ո՛վն երկար կամ միակն է՞ր չհատանէ: Եւ այս է ներհմտութեամբ գիտութիւնն, որպէս բժիշկ մի գիտէ շատ դեղեր, թէ այս ինչ և այս, այս իրաց և այս ցաւոց դեղք են և ոչ աս գիտէ զպատճառն, բանզի բժիշկն, որ ներհմտական է, յիշէ անբան պահպանութեամբ. թէ զայս դեղս զայս ազգ ցաւոս արարի բազում անգամ. նա եղև, և բանի արարի. նոյնաբար արար և զօգնան: Բայց անբան պահպանութեամբ զայն ասէ, որ չէ իմաստութեամբ և գիտութեամբ զէութիւն ցաւոն և զբնութիւն և զգիտութիւն դեղին ըստ օրինի իմաստաբար բժշկաց, այլ միայն սովորութեամբ առնելովն բազում անգամ: Որպէս ունի և անբան էշն այսպիսի յիշողութիւն, թէ այլ եմ եկեալ յայս ճանապարհ: Իսկ արհեստ է ընթանալոր գիտութիւն, որ և զպատճառն գիտէ, որպէս աստեղագէտն գիտէ. թէ է՞ր հանապազ շրջի երկինքն և այլն, որ ասէ, թէ արհեստ պարծեալ է, որ ունի յինքն փայփեան և երևակա[յ]է միաքն, զինչ կամի գործել զորպիսութիւն նորա, որպէս հիւսն զտաշտն և ատաղձագործն զատաճանին ձևն և ապա ճանապարհորդէ գործ առնել զնոյնն: Բայց երևակայութեամբ ասցուք վասն բնութեանն, զի և բնութիւն իմացն այլ ասի ունակութիւն, այսինքն՝ զսերմանելն յարգանդի և ծնանելն և աճելն, նոյնպէս և զամենայն այսպիսի բնական իրս: Բայց սոքա ոչ նախ երևակայանան և ապա լինին, այլ առանց կերպարանելոյ ի միտս զան յառաջ սոքա: Իսկ արհեստն ոչ այսպէս, այլ նախ երևակա[յ]ի [ի]* միտս առնօղին, այսինքն՝ կերպարանի օրինակ իրացն, զոր կամի առնել և ապա ճանապարհորդէ յառնել գործով, զոր նկարեաց ի միտսն: Բայց բնութեամբն ոչ այսպէս, այլ ունակութեամբ առանց կերպարանելոյ զան յառաջ ամենայն էքս սաղմամբ, զի ոչ ոք նախ կերպարանեցաւ և ապա եղև արու և կամ էգ:

**Բան.** Եւ դարձեալ արհեստ բաղկացեալ:

**Լծ.** Այսինքն՝ գոյացաւ ի բազում առնելոյ մարդկան զնոյն սոյն վասն պիտոյից իւրեանց և ի բազում առնելոյն կոկել ողորկեցաւ արհեստն, զոր և ասեն ոստայնանկութիւն և կամ փայտահատութիւն: Բայց ոչ մէկ արհեստին ամենայն հնարութիւնն մէկ մարդոյ գտաւ, այլ ի բազմաց, ապա՛ գոյացաւ. որպէս հիւսնութիւնն՝ ոմն զհատանելն ի մայրայն իմացաւ, և այլ ոմն՝ զկոփելն, և ոմն՝ զլուրելն. և այսպէս ամենայն արհեստի յոլովից արանց, ապա գոյացաւ: Եւ ներհմտութեամբ, այսինքն՝ թէ ի շատ առնելոյն մէկ մարդն զայս արհեստս իմացաւ ամիլ: Այլ գոյ արհեստ անպէտ՝ պար[ա]նխաղացութիւն և որ ի վերայ ծողիցն երթայ: Եւ չար արհեստ՝ կախարդութիւն: Իսկ մակացութիւն է ընթանալոր էիցս գիտութիւն, որ գիտէ զպատճառն և է անսայթաք և անփոփոխ, որ չփոփոխի, թէ այս չէ. որ մինչև այսր գիտէի և անսխալ գիտէ զիրն ենթակայսն, որպէս աստեղագէտն զիրն, և երկրաչափն զիրն. և իմաստասէրն զամենայն: Զօրօրինակ բնութեանն գիտող բժիշկն գիտէ անսխալ զամենայն հիւանդի բնութիւն քննել և ըստ այնր տալ զգիտեցեալ դեղն: Բայց յորժամ համեմատէ զարհեստ և զմակացութիւն, գտանէ զմակացութիւնն ընդհանրական գերագոյն քան զարհեստ, զի արհեստին ենթակայքն են սղալկոտ. և որպէս փայտն և այլքն, իսկ արհեստն անսղալ է որպէս մակացութիւնն: Այս այս է գիտութեան օրինակքն, զի չորիս այսպիսիկ գոյանայ գիտութիւն, հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ և մակացութիւն. զորս մեկնեաց զորպէս սոցա: Ի բանն որ ասէ՝ բանզի պարտ է գիտել զԵ գիտականն զօրութիւնս՝ զզգայութիւն և զայլն: Զզգայութեամբ գիտութիւն ասի, զոր աչօք տեսանէ և ականջօք լսէ և այսպէս զայ ի գիտութիւն: Տեսանել, թէ այս սուրհկ նշի է, և այս ձայն այս անասնոյ, բայց այս մասնական գիտութիւն է: Իսկ երևակայութիւն զայն ասէ, զոր յառաջագոյն տեսեալ լինի և կամ լսե[ա]լ յայլ աշխարհ և այժմ տպաւորի ի միտսն, զոր լինի տեսե[ա]լ կամ լսել զկերպարան մարդոյ, կամ զանասնոյ, կամ զայլ իրաց. և այս մասնական գիտութիւն է: Իսկ լոկ մտածութիւն զայն ասէ, որ միայն կերպարանի ի միտսն գլուխ մարդոյ և անձն գազանի և այլ սոյնպիսի: Զայս ասէ, թէ լոկ դատարկ մտածութիւն է, զի չգոյ այսպիսի իր: Իսկ կարծիքն երկակի է, ասէ, է՛, որ պատճառաւ և է՛, որ անպատճառաւ. և այն պատճառաւ լինի, այսինքն՝ որ գիտէ պատճառ կարծեացն, կարէ և այն յեցյ հանել զկարծեցեալն, այսինքն՝ ի գլուխ: Եւ այն, որ առանց պատճառի կարծիք լինի, ոչ գիտէ զառոյցն և ոչ կարէ ի ծայր հասա-

* Ավելացված է ըստ քննական բնագրի:

նել զկարծեցեալն: Իսկ արամախոհութիւն այն է, ասէ, զընթանուրսն գիտենալ, յորոց վերայ և խորհի համեղեալ պատճառաւ, թէ այս ինչ է երկիր և տունկք, և այս ինչ է մարդ և անասուն, օդ և ծով, զայլսն ամենայն և զայս ամենայն որ խառնուածին, որ այսպէս է: Եւ արամախոհութիւն և միտքն, ասէ, ծնանի զմակացութիւն, զի յորժամ սկիզբն առնու իրաց մի, որ դժուարին է լսել, ապացուցի լսեցանէ. և յիրսի բազում աշտիճանօք ցուցանէ իմաստասիրութիւն գոյացեալ: Ի բանն, որ ասէ, ենթակայութեամբ նիւթոյ գոն և մակամտածութեամբ աննիւթ, որպէս ձևք, և գոյնք, և չափք, քանզի եռանգիւնին և քառանգիւնին աննիւթք են առանց յէութենէ վերաղնելոյ: Այսպէս և չափն՝ երկայն և կամ զնդաձևն, նոյնպէս և գոյնքն՝ կարմիրն և սպիտակն և այլքն, եթէ ոչ գտանեն նիւթ, յոր դրսկանան, զի առանց նիւթի ոչ երևի, որպէս մոմի և մատնէհարի օրինակաւ ուսանիս: Եւ վասնզի միջակ է երկուցն բնաբանականին և աստուածաբանականին. ճախարեցաւ ուսումնականն զմիջինն առնուլ դաս, զի ոչ է այս կարգութիւն յամենևիմբ նիւթականացն յամենևին աննիւթն ելանել* և նմանել քերթողութեանն առակին և արանցն Սաւոսի՛ և Փիլասոսի, որք կամեցան զլերինսն յիրերաց վերայ բարձել և յերկինս ելանել. և են զՈսա՛ և Ողիմպիոս մեծամեծ լերինս յարևմուտս կոյս: Այսպէս և Բիլոն այնքան բարձր, մինչև ծայր լերինն ի սաստիկ եղեալ բարձրութենէն, իբրև զտերև, չարժի ի հողմոց: Եւ ոչ է պարտ տարակուսիլ իբրև թէ բնաբանականն և նա՛ ուսումնական է, քանզի բնաբանականն ի վերայ ամենայն էիցս բնաքննութիւն առնելն է. և այս լինի և առանց ուսման ի ձեռն զգայարանացս, զի տեսանեմք զերկին** աչօք, որ միշտ ի խաղալ է, և զերկիր, որ հաստատուն կայ, և զմարդ Բ ընթանա ոտիւք և զանասուն, որ քառոտնք: Եւ այսպէս բնախօսեմք յաղագս էիցս առանց ուսման: Իսկ ուսումնականն է ի արամախոհութեանն, վասն որոյ և մասունք ուսումնականին, որ է երկրաչափականն, և աստեղաբաշխականն, և երաժշտականն, և թուականն, ո՛չ այլով կարողանայ գիտել, եթէ ոչ ուսմամբ և արամախոհութեամբ: Քանզի ամենայն իրք, որ ուսանիլ բնաստեցաւ, արամախոհութեամբն լինի, զի կարեն միտքն պարզաբար զէքս գիտել առանց ուսանելոյ: Այսպէս, զի տեսանէ զերկին և զերկիր և զայլ ինչ ի յէիցս և զմի մի որոշէ պարզաբար այս ինչ է այս և այս ինչ այս, բայց ուսումնականն ոչ լինի այսպէս, այլ յոյժ խոհեմական ի նեղմտածմամբ և բազում աշխատանօք, վասն որոյ յետ բնաբանականին կարգեցաւ յիմաստասիրացն և այսով ելանել յաստուածաբանականն, քանզի ոչ գոյ հնար առանց ուսումնականին ի բնաբանականէն յաստուածաբանականն ելանել:

Այլ վասն զի երկսառութիւն բնաբանականին և աստուածաբանականին խիտ և երկար է, ասէ՛, և մեծի լռասարութեան պէտս ունի, վասն որոյ լռութեանցն քայցուք: Տե՛ս ո՞րքան արբոյս բան է ասացեալ, զոր այժմ ոչ է ի միջի, կարծեմ վասն ոչ ընդունելի լինելոյ ի մէջ անոպա՛ ցեղիցն: Եւ բազմախիտ վասն այնր ասէ զբնաբանականին բաժանմունքն, զի թէ ի Դ-ից գոյացան տարերց ամենայն արարածք, սակայն այլ բնութիւն երկնայինցն է մարմնոյ, և այլ երկրայինն, այլ մարդոյ և այլ անասնոց, այլ սողնոց և այլ զազանաց, այլ թռչնոց և այլ լողականց. և այսպէս յանբաւն ելանէ: Վասն որոյ յիրաւի ասաց, թէ բազմախիտ է: Այսպէս և յաստուածաբանականն, զի յորժամ յաղագս անեղութեանն և անմատութեանն, պարձեալ, զի անուն և անեղն է յաղագս արարչութեանն, թէ որպէս զանբաւ այս արարած յոչ գոյից և յանէից գոյացոյց, և նախախնամէ և բերէ զօրութեամբ անկարծանելի և այլ սոյնպիսիք յաստուածայնոցն: Տե՛ս, թէ որպէս բազմախիտ և մեծի լռասարութեան կարօտի: Վասն որոյ այլում ասաց թողուլ իրողութեանց: Դարձեալ և վասն ուսումնականին լինել, ասաց, բազմախիտ, բայց այժմ զհաւատի կարճառօտն ասացուք: Եւ պարտ է գիտել, թէ ուսումնականն քանակիւն գոյանայ և այսոքիւք ճախաւորի, զի թուականն քանակ է, որ է այսպէս. թուականն կամ լինի Ժ, կամ Ճ, կամ Ռ, որ[ք] քանակն են և ոչ անքանակք. և կամ բաղադրութեամբ հնչմանցն երաժշտականն, քանզի և այն քանակ է: Բաղադրեալ ասէ, որ այլ և այլ ձայնքն բաղկանան և մի լինին ժիրն և բամբն, զի երաժշտական պտուեալն չափով և քանակիւ, զի խնդրէ ի լարսն, թէ որ է, որ զերկպատիկ ձայնն ունին, և որ է, որ կէս ձայն հանէ, և որ, որ զերեք ձայնն հանէ, և որ, որ զչորրորդն հնչէ, քանզի որ գիտէին զերաժշտականն, նա աշտիճանք համարք ունէին ձայնիցն. և զայն ի լարս քնարիցն յարմարէին. մինչ զի զանշանչսն շարժէին յորժամ հարկանէին: Բայց տե՛ս զի ձայնքն և լարքն և եղանակքն ի չափ և ի կշեռք էին որպէս ասէ, թէ խնդրէ՝ ո՞ր է, որ զկիսաբոլորն ունի ձայնին, այսինքն՝ զկէս եղանակին, և ո՞ր, որ զկրկնապատիկն, որ է երկուքն, և որ, որ զմակեռակն***, որ է Չ եղանակն, և ո՞ր, որ զմաքառակն, որ է ութն: Եւ թուի, թէ մինչև ցայս վայր էր ձայնիցն յեղանակքն, որ յարէին և զքնարսն: Եւ թէ այլ գոյր մասունք առցա, էին իսկ գլխաւորք այսոքիկ, որպէս և այժմ գոյր յիշատակն ի միջի մերում: Եւ տե՛ս որ և երաժշտականն քանակ է, և ոչ անթիւ և անչափ, վասն որոյ ասաց, թէ ուսումնականն քանակիւն

* Ձեռագրում՝ երանէ: Ուղղել ենք ըստ քննական բնագրի:

** Ձեռագրում՝ զերկիրն: Ուղղել ենք ըստ քննական բնագրի:

*** Ձեռագրում՝ զմակեռոն: Ուղղել ենք ըստ քննական բնագրի:

գոյանայ: Բայց ծանի՛ր, որ ճշմարիտ երաժշտականն քանականութեամբն գոյանայ և ապա զկըրնի բանին և զձայն շարժեն, զի խնդրէ՝ ո՞ր է, որ զերկպատիկ բանն ունիցի, որպէս այն, որ զեղ աստ է և նշանակէ զմայրոյ զեղ և զշէն: Եւ ո՞ր, որ զկիսաբոլորն, որպէս յորժամ բա՛ ասէ, որ ոչ բան կատարեաց, այլ է կիսաբան: Եւ ո՞ր, որ զմակետակն և զմակքատակն, որպէս յորժամ անդ ասեմք, որ նշանակէ զհօտ և զանդաստան և զհանդերձեալն, այս մակետակն: Իսկ մակքատակն՝ որպէս առր ասեմք և նշանակէ զատեր և զառր ձայն, և ընթացս և զթռիչս հաւու: Եւ այսպէս բազում իրօք երաժշտական բաժանի: Դարձեալ և այսպէս երաժշտականն զմի բանն ի ձեռն ձայնից և եղանակաց այլ և այլ գիտէ ասել, քանզի գիտէ բաժանել զպարամականն յորախականէն, վասն որոյ և ասաց, թէ երաժըշտականն քանակ է: Դարձեալ և զերկրաչափականն քանակ ասէ, զի ասպասկացեալ է, բայց չափել և քանակել երկա[յ]նութեամբ և լայնութեամբ. վասն որոյ իրաւի և սա քանակ է: Նոյնպէս և աստեղաբաշխականն քանակ է, զի զերկնային մարմինն գիտէ քննել, և երկինքն զընդաձև և բոլորակ: Եւ թէպէտ անբաւ սակս մեծութեանն. սակայն ընդ չափով է անկեալ և ընդ քանակի, որպէս գիտէ, որ ասացն: Զի ամենայն, որ բոլոր է, նա չափեալ է և ապա կարէ զընդաձև լինել: Թէպէտ և ի մէնջ ոչ է չափեալ, այլ քանակ է, զի ի քսանուչորս ժամն մի հոլով առնու և այն ցուցանէ, որ չափեալ և քանակեալ է, որով ուսումնականն գոյանայ: Շարունակ քանակ փայտ ասէ, որ ի բազմացն մի իրք լինիցի, որպէս որմ, որ ի բազում քարից և ի խճից և ի խիպարից ի ձեռն շաղկապից մի իրք է բաղկացեալ: Բայց օրինակ է, որպէս և աստ, թէ զօրութեամբ հատանեն, այսինքն՝ մտածութեամբ միայն և ոչ ազդմամբ: Զի թէ ազդմամբ բաժանեն, ցնդին քարինքն ի միմեանց և անգանին ի մի եղելոյն: Եւ տե՛ս, զի զերկիր շարունակ քանակ ասէ և իրաւ է, զի թէպէտ մի է, սակայն բազմաք ի մի շարե[ա]լ ըստ օրինակի որմոյն: Զի աշխարհն սպարսից ի հայոց էն կցեալ լեռանք՝ և այս օրինակաւս ամենայն աշխարհ: Դարձեալ քարինք, և* հող, և ծով. և կղզիք, և գետք, և բոյսք, և տունկք, անասունք և մարդիք մի երկիր ասին և են, որ, զի թէ իմանալի գծիւ բաժանես, հատանին ի միմեանց: Եւ իմանալի գիծ ասէ զայն, որ մարք որոշես ի միմեանց, զքարն և զհողն, զլեառն և զդաշտն: Եւ իմանալի ասէ, որ իմանաս միայն, զի ոչ կարես զգալի գծով որոշել, որպէս յորմէ, որ օրինակ էր, զի որմոյ գիծն զգալի է, զի տեսանես զգիծն ի մէջ երկուց քարանցն: Եւ վասն այնր իմանալի ասաց, զի ոչ տեսանես զշարունակե[ա]լ երկրիս մասունքն բաժանեալ ի միմեանց զգալի գծով, այլ իմանալի անուանես միջոցաւ կարես ասել, թէ այս լեառնս կցեալ է [ի յայն] և այն՛ ի յայն. որպէս քար՝ ի յորմն: Վասն որոյ շարունակ քանակ ասաց զերկիր:

Իսկ անջրպետ քանակ ասէ զայն, որ ոչ են կցեալք ի միասին. որ է թիւքն, զի թիւքն ըստ ինքեանց ի զատ ի զատ անձինք** են, զի այլ իրք մեկն, և այլ՝ երկուքն, և այլ՝ երեքն: Նոյնպէս մինչև ի Ժ հատեալք են ի միմեանց: Եւ թէպէտ Ժ յԲ հնգէ [է] գոյացեալ, բայց ոչ անի այլ թիւ ի մէջն, որ իբրև զգիծ շաղկապէ զինքեանս առ իրար, այլ այսպէս, որպէս Արեգակն և Լուսին և ամենայն աստեղք: Նոյնպէս և թիւքն որիշ որիշ անձինք են. որպէս որ ըստ ինքեան ասէ զայն թիւքն. որ մինչև ի տասնն է, զի ինքեանք ըստ ինքեանց առանձինք են կատարեալք: Եւ բաղազանեալ զայն ասէ, թէ Ե և Ժ, որ է Ժ և Ե և թէ Ժ. Բ Ե է: Եւ այս, որ մինչև ի Ժն է, ոչ է*** բաղազան. այլ այն, որ անտի ի վեր շարին. թէպէտ և ոչ յստակ է բաղադրանս, այլ ասանի: Եւ ասէ, թէ անջրպետ քանակն սրատասական է, քան զշարունակն այսու օրինակաւ, զի կարող գոյ ի միում ժամու Բ կերպարանս ցուցանել, որպէս թիւդ, որ անջրպետ և ըստ ինքեան քանակ է և ցուցանէ զայս ինչ ի միում ժամու՝ զբոլոր և զքառանկիւնի, որպէս յորժամ բազմապատկել սկըսանիս զԵ թիւն՝ ասելով հնգիցս հինգ, որ լինի Ի և Ե, այս բոլորն. զի հընգէ սկսաւ և ի Ե աւարտեցաւ: Դարձեալ և նոյնն հնգիւս է և քառանկիւնի: Բայց պարտ է գիտել զպիտեստ քառանկիւնի թուոցն և է այսպէս, զի սկիզբն ամենայն քառանկիւնեաց, և եռանկիւնեաց, և Ե անկիւնեաց, և Զ անկիւնեաց և ամենայն թուոյ միակն է: Եւ յորժամ կամիս քառանկիւնի թիւ առնել, այսպէս է. նախ դնել զմիակն և թողուլ ընդ մէջն Բ և առնու[լ] զչորսն, և դարձեալ թողուլ ընդ մէջ Դ, և առնուլ Թ, և թողուլ Զ և առնուլ ԺԶ և թողուլ ութ, և առնուլ ԻԵն: Եւ այսպէ[ս մինչև ի]**** քսան և հինգն քառանկիւնի է և բոլոր: Այսպէս և***** բոլոր և քառանկիւնի ԼԶն, զի սկսեալ ի վեցէ ի Զ աւարտեցաւ և է քառանկիւնի, յորժամ ի ԻԵ Ժ թողուս և առնուս զԼԶն, զի ըստ առաջին թողուածոցն, որ ի մէկէն մինչև ի չորսն թողեր, քանի կամիս յերկարել զքառանկիւնի թիւդ, երկու երկու յաւելու ի թողուլդ: Որ թողուի ի մէկէն մինչև ի չորսն՝ երկուք և [ի] չորս[էն] մինչև ի յինն՝ չորք և յննէն մինչև ի ԺԶն վեց և ի ԺԶէն մինչև ի Ի և Են՝ ութ և ի Ի և Եէն մինչև յԼԶն՝ տասն: Եւ այսպէս, յորժամ ԲԲ յաւելցնես ի թողուլն ըստ առաջին թողլոյն, որ ի մէկէն մինչև

* Թէ ձեռագրում և թէ քննական բնագրում ի է: Ուղղել ենք ըստ Երուսաղեմի թիվ 885 ձեռագրի:

** Ձեռագրում առանձիք է: Ուղղել ենք ըստ քննական բնագրի:

*** Ձեռագրում ի է: Ուղղել ենք ըստ քննական բնագրի:

**** Ձեռագիրն ունի՝ այսպիսի: Ուղղել ենք ըստ քննական բնագրի:

***** Ձեռագրում և է: Ուղղել ենք ըստ քննական բնագրի:

ի չորքն, որքան կամիս, յերկարես զքառանգիւնին: Դարձեալ և եռանգիւնին այսպէս է, որ դնես առաջին զմէկն և թողուս մէկ մի և առնուս զերեքն և յետ երեքին կրկնապատկէ զթուոյն և առնու[ս] զՁն և թող[ս] Գ և առնու[ս] զԺ: Եւ սոյնպէս մի- մի յաւելով ի թողուլն ըստ առաջին միոյն, որ ի մէկէն մինչև յԳՆ: Այսպէս է և Ե անգիւնին՝ դնէ զմէկն և առնու Գ, և առնու զԵն և թողու Զ և առնու ԺԲ: Եւ սոյնպէս ի կարգն Գ Գ աւելեցնէ ի թողուլն: Այս արտեստ է ի Զ անգիւնիքն և ի կարգն: Եւ այսք առաջնոյ պատուական համարեցաւ զտաղտուկ բանակն բան զշարունակն, որպէս զի ի միում ժամու զանազան կերպարանս բերէ, որպէս Ի և Են, որ և՛ բոլոր, և՛ քառանգիւնի: Վասն այսր ասէ, թէ թուականն առաջին, զի ըստ ինքեանց անձինք են թիւքն ի զա՛տ ի զա՛տ: Եւ յետ այսր երաժշտականն[ն], զի բաղադրեալ է: Սոյնպէս՝ որ ի բանից, և ի ձայնից, և յեղանակաց: Եւ դարձեալ ի փոքից և ի բնաւից, ապա գոյանայ: Եւ յետ այսր երկրաչափ[ականն], զի անշարժ շարունակ է [և] պատուական է, քան զշարժունն: Եւ ապա աստեղաբաշխականն, որ շարժուն՝ շարունակ բանակ է: Շարժուն, որ միշտ կայ շարժի և շրջի, և շարունակ՝ զի երկինքն յոլով պարունակք են, յոր առկայացեալ են լուսաւորացն անձինք: Եւ ամենայն պարունակք ի մի շարե[ա]լ միշտ շրջին: Վասն որոյ ասաց, թէ նախ այն է, որ հաստատուն կայ, քան այն, որ շարժի: Որպէս նախ լինելն է. քան այսպէս լինելն, այսինքն՝ նախ փայտն, քան նշին և ընգուզին, և նախ կենդանին է, քան մարդ կենդանին կամ անասուն կենդանին: [Եւ թուականին]* յարակայան[յ] համարողականն, բայց զանազանին այսու, զի թուականն զբնութիւնն քննէ՝ զԱ և զԲն և զԳն և զԴն Ժ ասէ: Եւ երաժշտականն՝ ամենայն քնարք: Եւ երկրաչափականն՝ որ պարսնով զերկիր բաժանեն, և աստեղ[աբաշխ]՝ ամենայն գնդոյձև իրք՝ անիւ և սայլի կունդն և այլք նոյնպիսիք: Բայց աստեղաբաշխականն յերկնիցն բոլորն միայն և ոչ այլուր ի գնդիցդ:

Ի բանն, որ ասէ՝ որպէս պատահումն ի պատահումն:

[Լծ]. Սովորութիւն է սորա զգոյնն պատահումն ասել, նոյն և զբնութեամբ ջերմութիւնն պատահումն ասել, որպէս պղպեղն և կիրն Բ ունին պատահումն՝ մի զգոյն և միւս զտաքութիւն. զի պղպեղն և կիրն բնութեամբ տաք են, որպէս և այլ իրք ի միոջէն անորիշք և անբիւք: Նոյնպէս և առ մինն, այսինքն՝ բազում իրք կան, որ ի միոջէ են սկսեալ և առ մի հային, որպէս որ ի բժշկէն ելանեն առ մին հային՝ առողջութիւնն, և որ ի հիւսնէն ելանեն՝ ամենայն առ շինութիւնն հային, և որ յիմաստասիրէն ելանեն առ մինն հային՝ ի նմանենալն Աստուծոյ: Վասն որոյ ասաց այս իրսիս, որ ի միոջէ ելանեն և առ մին հային, անորիշք են ի միմեանց, այսինքն՝ անքակտելի, զի նմանք են միմեանց [ի] միոջէ ելանելով: Դարձեալ և անբիւք են, զի շատք են:

Բան. Իսկից և անիսկից:

Լծ. Իսկ ասէ գոյիցն և անիսկ՝ որ ոչ գոյ է: Որպէս և յառաջ ընթացեալ, ասէ, թէ այս ինչ և այս իբրև զիսկ, բաժանի իբրև զգոյ, որ է կենդանի՝ ի բանական և յանբան: Տե՛ս, որ գոյիցն իրք ասէ: Դարձեալ և այս ինչ իբրև ձայն բաժանի. ոչ է գոյ ի բաժանումն, այլ իբրև զձայն, որպէս թէ ասէ, թէ այն, որ պատահումն բաժանի և այլք, այն գոյիցն է պատահումն և բաժանումն ոչ իբրև իրք և ոչ իբրև ձայն, այլ իբրև գոյն և պատահումն բաժանի: Ի ճառն, որ ասէ, թէ անհատք մասամբ ցուցանի. այսինքն՝ թէ անհատքն բազումք են անձն-անձն որիշին ի մի մի, իսկ տեսականն և գործնականն ի միմեանս են յարեալք և միմեամբ ապա՛ կարեն կ[ե]ալ:

**Г. К. Мирзоян - Целостное ли произведение "Причина книги определений"? (Публикуется в связи с 60-тилетием автора).-** В богатой сокровищнице армянской литературы есть памятники, которые дошли до нас без указания авторов и в научных кругах они известны как "Анонимные". К числу таковых относятся выдающиеся произведения "Причина книги определений" и "Толкование книги определений философа Давида Анахта" (отныне - "Причина" и "Толкование").

В связи 1500-летним юбилеем Давида Анахта, готовя к публикации критический текст, составленный на основе обнаруженных рукописей редакции А "Толкований" (до нас дошли два варианта) составители - А. Мадоян и Г. Мирзоян, исходя из некоторых обстоятельств, сочли вероятным, что эти два произведения составляют "один единый труд, ибо они родственны и по содержанию, и по языку".

Продолжая научные изыскания в этом направлении, автор исследовал рукописи, содержащие произведение "Причина" собрании армянских рукописей Матенадарана им. Маштоца и Иерусалимского хранилища, и пришел к выводу, что исследуемые сочинения по недоразумению разъединенные части одного большого труда. Выяснилось также, что рукопись "Причина" содержит редакцию А "Толкований". Автор обнаружил еще десять различных списков этого произведения.

Соединение этих частей воедино восстанавливает выдающееся произведение армянской средневековой философской мысли во всей его полноте и восхитительной красоте.

Учитывая это обстоятельство, впервые на суд читателя выставляется полностью упомянутый труд, который автор позаимствовал из иерусалимской рукописи N 434.

---

* Լրացրել ենք ըստ բնականի բնագրի: